

**ՃՈՐՍԸՆ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵՆԷՆ
ԿԸ ՊԱՀԱՆՋԷ ՅԵՏԱԶԳԵԼ «ՊՐԵԳԶԻԹ»-Ը**

Եւրոպական խորհուրդի նախագահ Տանջլտ Թուսք յայտարարեց, որ Լոնտոն Եւրոպական Միութեան ղեկավարութեան դիմում ներկայացուցած է յետաձգելու Բրիտանիոյ՝ Եւրոպական Միութենէն դուրս գալը՝ «Պրեքզիթ»-ը: Թուսք նշեց, որ այդ դիմումի պատասխանին շուրջ պիտի սկսի խորհրդակցիչ Եւրոպական Միութեան ղեկավարութեան հետ: Բրիտանիոյ վարչապետը յայտնեց, որ Եւրոպական Միութենէն պահանջած է յետաձգել «Պրեքզիթ»-ը, իսկ Բրիտանիոյ խորհրդարանը ջունարկեց ի նպաստ «Պրեքզիթ»-ի յետաձգումը արտօսող բարեփոխումի մը: Եւրոպական յանձնաժողովը իր կարգին Բրիտանիայէն պահանջեց կարելի եղածին չափ շուտ յստակացնել «Պրեքզիթ»-ին վերաբերող յաջորդ քայլը: Ճոնսըն յայտնեց, որ իր երկիրը Եւրոպական Միութենէն պիտի հեռանայ ճիշդ ինչպէս որոշուած էր:

**ԱՆՆԱԽԸՆԹԱՅ ՏԱՐՈՂՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԻՐԹ ՁԵՒՈՎ՝
ՀԱՐԻՒՐ ՀԱԶԱՐԱՒՈՐ ՑՈՒՑԱՐԱՐՆԵՐ ՉՈՐՐՈՐԴ ՕՐՆ ԸԼԼԱԼՈՎ ՈՂՈՂԵՑԻՆ
ԼԻՔԱՆԱՆԵԱՆ ՔԱՂԱՔՆԵՐՈՒ ՀՐԱՊԱՐԱԿՆԵՐԸ ԵՒ ՃԱՄՔԱՆԵՐԸ**

**ՀՅ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԱԾ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄԸ ՆԵՐԱՌՈՒԵՑԱՒ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄՆԵՐՈՒ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԻՆ ՄԷՁ**

Լիբանանցիներուն պողոթնումը վե՛րածուեցաւ երկրին պատմութեան մէջ արտակարգ եւ անսախնթաց երեւոյթի մը, որուն կարեւորութիւնը կը կայանար անոր մէջ, որ լիբանանցի ժողովուրդը իր արդարացի ցաւը արտայայտեց քաղաքակրթութեամբ՝ մերժելով խուլիկաններուն մուտքը իր շարքերուն մէջ եւ մնալով կառչած ցոյցերուն խաղաղ բնոյթին:

Ժողովրդային բողոքի ցոյցերը շարունակուեցան նաեւ երէկ: Չորրորդ օրն ըլլալով լիբանանցիները փակ պահեցին Լիբանանի տարբեր շրջանները եւ հսկայ բազմութիւններով փակեցին փողոցները՝ «Յեղափոխութիւն» գոռալով, իշխանափոխութիւն պահանջելով, ինչպէս նաեւ պահանջելով վերջ տալ համայնքային դրութեան:

Առաւօտեան ժամը 8:00-էն մինչեւ երեկոյեան կէս գիշեր Ռիատ Սոլիի, Նահատակաց հրապարակի, Կեդրոնական Պէյրութի փողոցներուն, Թրիփոլիի Նուր հրապարակին, Չուքի, Ղազիրի, Ժիպէյի, Շեքքայի եւ ժալ էլ Տիպի մայրուղիներուն, Պեքայի, Պապայե-Յերմէի, Սայտայի, Սուրի, Նապաթիէի, Պաքլի-նի, Շուֆի, Ալէյի, Չաիլէի, Յալպայի, Աքքարի, հալտէի եւ Ժիէի մէջ բողոքի ցոյցերը ընթացան նոյն թափով՝ բազմամարդ, խաղաղ եւ քաղաքակիրթ:

Ցոյցերուն ընթացքին քաղաքացիները բարձրացուցին միայն մէկ դրօշակ, որ Լիբանանի դրօշակն էր, ինչպէս նաեւ քանի մը անգամ երգեցին Լիբանանի քայլերգը:

Ակներեւ էր եւ դիպուկ յատկապէս երեկոյեան ժամը 6:00-ին բոլոր շրջաններուն մէջ հաւաքուած ցուցարարներուն կողմէ Լիբանանի քայլերգին երգեցողութիւնը:

Ցուցարարները առաւօտեան կանուխ ժամերուն հրապարակներէն հեռացան՝ կոչ ուղղելով բոլորին այսօր աւելի մեծ թիւով ներկայանալու ցոյցի



Նահատակաց հրապարակ

վայրերը՝ շարունակելու համար իրենց պահանջատիրական շարժումը:

Լիբանանի մէջ իշխանափոխութեան պահանջող այս շարժումին միացան նաեւ արտերկրի լիբանանցիները:

Փարիզի, Պարսելոնայի, Լոնտոնի, Իտալիոյ, Շուէտի, Իստոնբուքի, Նիկե-

րիոյ, Կիպրոսի, Աւստրալիոյ, Գերմանիոյ, Միացեալ Նահանգներու, Զանաւայի եւ Յորդանանի մէջ ապրող արտերկրի

րար Մոհամմետ Ֆընէշ, ելեւմուտքի նախարար Ալի Յասան Խալիլ, հանրօգուտ շինութեանց եւ փոխադրութեան հար-

Կեդրոնական կոմիտէին եւ Յայկական երեսփոխանական պալատին ընկերային-տնտեսական պատկերացումը՝ հաս-



Նուր հրապարակ, Թրիփոլի

լիբանանցիները լիբանանեան դեսպանատան դիմաց կազմակերպեցին զօրակցական ցոյցեր, որոնց ընթացքին բաժնեցին իրենց հարազատներուն ցաւը՝ իրենց կարգին կոչ ուղղելով վերջ տալու երկրին մէջ տիրող փտածութեան եւ կոչ ուղղելով վերացնել համայնքային դրութիւնն ու կերտել քաղաքացիական պետութիւն:

Վարչապետ Սաատ Յարիրի, որուն խնդրած կարճ ժամկետը կ'աւարտի այսօր երեկոյեան ժամը 7:00-ին, երէկ Կեդրոնական Պէյրութի իր բնակարանին մէջ նախագահեց կառավարութեան սեղմ նիստի մը, որուն ներկայ գտնուեցան արտաքին գործոց նախարար Ժրպիան Պասիլ, մարմնակրթութեան եւ երիտասարդութեան հարցերու նախա-

ցերու նախարար Եուսէֆ Ֆընիանոս, ներքին գործոց նախարար Ռայա Յասան, զբօսաշրջութեան նախարար Ալեւտիս Կիտանեան եւ ճարտարարուեստի նախարար Ռաւէլ Պու Ֆաուր:

Նիստին ընթացքին մշակուեցաւ տնտեսական բարեկարգումներու փաստաթուղթ մը:

Նախարար Կիտանեան անգամ մը եւս շեշտեց ժողովուրդին պահանջներուն գոհացում տալու անհրաժեշտութիւնը եւ ներկայացուց 337 Լիբանանի

տառելով նաեւ նախագահներու, երեսփոխաններու եւ նախարարներու ամսականները նուազեցնելու իմաստով իրենց հաւանութիւնը:

Շաբ.ը՝ էջ 2

**ՀՅԴ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ ՎԱՐՉԱՊԵՏ
ՀԱՐԻՐԻՒ ՓՈԽԱՆՅԵՅ ԱՐՏԱԿԱՐԳ
ՔԱՅԼԵՐՈՒ ԴԻՄԵԼՈՒ ԱՆՀՐԱՄԵՇՏՈՒԹԻՒՆԸ**



337 Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ երեսփոխան Յակոբ Բագրատունի՝ ընկերակցութեամբ նախարար Ալեւտիս Կիտանեանին, շաբաթ, 19 հոկտեմբեր 2019-ին, երեկոյեան ժամը 6:00-ին, աւելի քան մէկ ժամ տեւած հանդիպում մը ունեցաւ վարչապետ Սաատ Յարիրիի հետ, անոր Կեդրոնական Պէյրութի բնակարանին մէջ:

337 պատուիրակութիւնը կարեւորութեամբ շեշտեց ընդառաջել ժողովուրդի արդար պահանջներուն եւ յառաջիկայ տարուան պետական ամսականը մշակել այնպիսի ձեւով, որ ոչ մէկ տուրքի յաւելում կատարուի, փտածութեան արմատները քանդուին, միջուկի առաջը առնուի, իւրացուած գումարները պետութեան վերադարձուին եւ ընկերային մարզին վերաբերող յստակ լուծումներ ապահովուին:

Կառավարութեան հրաժարականին մասին 337 պատուիրակութիւնը յայտնեց, որ ներկայ փուլին կառավարութեան հրաժարականը աւելիով կը բարդացնէ քաղաքական ճգնաժամը եւ երկիրը կը դնէ անորոշ, անսախտութեի եւ անհակաշռեղի վտանգներու դիմաց:

Ներկայ կացութենէն դուրս գալու համար թե՛ 337 պատուիրակութիւնը եւ թե՛ վարչապետ Յարիրի անհրաժեշտ նկատեցին արտակարգ քայլերու դիմել:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ. «ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ
ԽՈՍՏՈՒՄ ՊԷՏՔ Է ՏԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ՝
ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄՆԵՐՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՅԻՆ
ՇՈՒՏՈՎ ՍԿՍԵԼՈՒ»**

ԷՁ 3

ԱՆՆԱԽԸՆԹԱՅ ՏԱՐՈՂՈՒԹԵԱՄԵ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԻՐԹ ՉԵՒՈՎ ...

Շարունակում Լ. Էջեն

Կեդրոնական կոմիտեին եւ պլոքին պատկերացումը ներառուեցաւ վարչապետին մշակած բարեկարգումի փաստաթուղթին մէջ:

Բարեկարգումի փաստաթուղթը որդեգրած կարգ մը կէտերէն են. ներկայ եւ նախկին նախարարներու եւ երեսփոխաններու աշխատավարձերը յիսուն առ հարիւրով նուազեցնել, դրամատուներու եւ ապահովագրութեան ընկերութիւններու վրայ 25 առ հարիւր համեմատութեամբ տուրքեր պարտադրել, պետութեան սնտուկները, ինչպէս՝ գաղթականներու, հարաւային Լիբանանի եւ Բարեկարգումի եւ վերակառուցման սնտուկները ջնջել, լիբանանեան բանակին եւ ապահովութեան ուժերուն հանգստեան թոշակներու կրճատումները ջնջել, վերաշխուժացնել տնտեսական վերահիւսկողութեան խորհուրդին աշխատանքը, լիբանանեան արտադրութիւնները քաջալերել եւ ներածած արտադրութիւններուն վրայ յաւելեալ տուրքեր պարտադրել, Կեդրոնական դրամատունն ու մնացեալ դրամատուները երեք միլիառ տոլարի դրամաշնորհներ կը յատկացնեն, իւրացում գումարները պետութեան վերադարձնելու օրէնքի վաւերացում, բնակարանային վարկերու տրամադրման վերսկսում, դրամատուներու շահերուն վրայ տուրքերը բարձրացնել, բքիջային հեռաձայնի մարզի սեփականաշնորհում, ինչպէս նաեւ նախարարներու, երեսփոխաններու եւ պետական պաշտօնատարներու դրամատանային հաշիւներուն գաղտնիութիւնը վերացնել:

Նիստէն ետք Ալի Յասան Խալիլ յայտնեց, որ նիստին ընթացքին համաձայնութիւն գոյացած է 2020-ի պետական ամսականը վաւերացնելու առանց տուրքերու յաւելումի կամ նոր տուրքեր պարտադրելու:

Ալեյի ուշ նշուեցաւ, որ քաղաքական գրեթէ բոլոր ուժերը համաձայն գտնուած են տնտեսական կացութիւնը փրկելու առումով վարչապետ Յարիրիի նախաձեռնութեան:

Միւս կողմէ, նախարար Ուալ Լպու Ֆաուր նիստէն ետք կրթութեան եւ բարձրագոյն ուսման նախարար Աքրամ Շեխալէպի եւ երեսփոխան Թայմուր ժումալաթի խորհրդատու Յուսամ Յարպի ներկայութեամբ, մամլոյ ասուլիսի մը ընթացքին դրուատեց Լիբանանի մէջ ընթացող քաղաքակիրթ ցոյցերը՝ ընդգծելով, որ Ընկերվար յառաջդիմական կուսակցութիւնը եւ Ժողովրդավարական հանդիպումը յարգանքով կը հետեւին ժողովուրդի պահանջներուն:

Ան նշեց, որ Ընկերվար յառաջդիմական կուսակցութեան նախարարները իրենց հրաժարականը պիտի չներկայացնեն, որովհետեւ անիկա առիթ պիտի չտայ իրենց ներդրում ունենալու այս դժուար պայմաններն ու կացութիւնը դիմակայելու իմաստով:

«Կառավարութեան մէջ մնալու մեր նպատակն է բարեկարգումներ գործադրել եւ երկիրը ամբողջական քայքայումէ փրկել», ըսաւ ան:

Կառավարութիւնը այսօր Պաապտայի մէջ պիտի գումարէ իր նիստը, կէսօրէ առաջ ժամը 11:00-ին: Նիստին ընթացքին պիտի քննարկուի կառավարութեան որդեգրած տնտեսական բարեկարգումներու ծրագիրը:

Նիստին պիտի նախագահէ հանրապետութեան նախագահ զօր. Միշել Աուն՝ ներկայութեամբ վարչապետ Յարիրիի:



Սուրի մէջ

Կը նախատեսուի, որ նախագահ Աուն այսօր լիբանանցիներուն յղէ պատկերապիշուած պատգամ մը:

Նշենք, որ Աուն շաբաթ օր իր այցելուներուն հետ ունեցած հանդիպումին ընթացքին յայտնած էր, որ երկրին դիմագրուած տնտեսական տագնապին յստակ լուծում մը պիտի երաշխատուի:

Լիբանանեան ուժեր կուսակցութեան ղեկավար Սամիր ժահժահ շաբաթ, 19 հոկտեմբեր 2019-ին, կէս գիշերին յայտարարեց Լիբանանեան ուժեր կուսակցութեան նախարարներուն հրաժարականը:

Կառավարութեան մէջ Լիբանանեան ուժեր կուսակցութեան նախարարներն էին՝ փոխվարչապետ Ղասսան Յասայանի, աշխատանքի նախարար Զամիլ Պու Սէյման, ընկերային հարցերու նախարար Ռիշար Գույումէան եւ վարչական բարեկարգումի պետական նախարար Մայ Շիտիաք:

Ժահժահ այս յայտարարութիւնը կատարեց Յօգոր հանրապետութիւն համախմբումին գումարած նիստէն ետք: Ան շեշտեց, որ ներկայ կառավարութիւնը անկարող է տիրող տնտեսական

տագնապին լուծումներ գտնել:

Ժահժահ շեշտեց, որ լիբանանցիներուն ընկերային յեղափոխութիւնը աննախընթաց է Լիբանանի պատմութեան մէջ, որովհետեւ անիկա ո՛չ կուսակցական եւ ո՛չ ալ համայնքային հաւաք է եւ շարժում:

Ժահժահ ընդգծեց, որ Լիբանանի ժողովուրդը իր ղեկավարներուն նկատմամբ վստահութիւնը կորսնցուցած է:

Ժահժահ քննադատեց բարեկարգումներ չորդեգրելու կառավարութեան մօտեցումը եւ կոչ ուղղեց կազմելու նոր կառավարութիւն մը, որ ներկայ կառավարութիւնը բաղկացնող քաղաքական ուժերու մեծամասնութենէն տարբեր ըլլայ:

Երեկ կէսօրէ ետք ժահժահ հարցազրոյցի մը ընթացքին ցաւ յայտնեց, որ երկու ամիսէ ի վեր Լիբանանեան ուժեր կուսակցութիւնը ամեն ջանք ի գործ կը դնէ բարեկարգումներ իրականացնելու, սակայն անոր ջանքերը կը մասն անպատասխան:

Ան կոչ ուղղեց վարչապետ Յարիրիին կազմելու նոր կառավարութիւն մը՝ աւելցնելով, որ ինք տակաւին կ'ակնկալէ Ընկերվար յառաջդիմական կուսակցութեան նախարարներուն հրաժարականը:

Երեկ երեկոյեան կատարած իր յայտարարութեան մէջ ժահժահ քաղաքական բոլոր ուժերուն կոչ ուղղեց կառավարութենէն հրաժարելու եւ Լիբանանի մէջ քաղաքական նոր կենսք մը սկսելու:

Ան նշեց, որ ներկայ տագնապը կառավարութեան եւ ժողովուրդին միջեւ անվստահութեան խոր տագնապ մըն է, որ կարելի չէ լուծել առանց արմատական որոշումներ որդեգրելու:

Ան հաստատեց, որ հարցը կը գտնուի անոր մէջ, որ պատասխանատուները քաղաքական կամք չունին բարեկարգչական այս քայլին դիմելու:

Իր կարգին, երեսփոխան Ֆայսալ Քարամէ Սիւննի խորհրդակցական հանդիպումին իր անդամակցութիւնը սառեցուց: Ան նշեց, որ իր որոշումը տուած է, որովհետեւ նախարար Յասան Մըրատ մերժած է կառավարութենէն հրաժարիլ:

Քարամէ հաստատեց, որ իր արժանապատուութիւնը չ'արտօսներ, որ երկրին վարչապետը չճաննայ Սիւննի խորհրդակցական հանդիպումը եւ մերժէ խօսիլ զայն ներկայացնող նախարարին հետ:

Ընկերվար յառաջդիմական կուսակցութեան ղեկավար Ուալիտ ժումալաթ երեկ երեկոյեան հարցազրոյցի մը ընթացքին կոչ ուղղեց ըստրական



Ռիատ Սուրիի մէջ

Ան շեշտեց, որ բարեկարգում չի նշանակեր տուրքեր պարտադրել՝ նկատել տալով, որ տուրքերը պէտք է պարտադրել հարուստներուն, ընկերութիւններուն եւ դրամատուներուն վրայ եւ ոչ թէ համեստ դասակարգին:

«Այսօր, այս զգայուն կացութեան ընթացքին կարելի չէ իշխանութիւնը տապալել: Չենք զօրակցիր կառավարութեան հրաժարականին, իսկ ներկայ իշխանութիւնը պիտի չտապալի», ըսաւ սեյիտ Նասրալլա:

Ան իր խօսքը ուղղելով ցուցարարներուն յայտնեց, որ անոնք իրենց ժամանակը կը վատնեն, իրենց զիրենց եւ երկիրը կը յոգնեցնեն, որովհետեւ



Ժալ Էլ Տիպի մէջ

իշխանութիւնը պիտի չկարենան տապալել:

Սեյիտ Նասրալլա ընդգծեց, որ Լիբանանի մէջ տիրող տնտեսական տագնապը 30 տարուան կուտակումներու հետեւանք է: «Ոչ ոք պէտք է խուսափի իր պատասխանատուութիւնները ստանձնելէ, ներառեալ՝ մենք», նշեց ան:

Մարոնի համայնքի Պշարա Ռայի պատրիարքը Ափրիկէ սկսած իր հովուապետական այցելութիւնը առանց աւարտելու վերադարձաւ Լիբանան:

Ռայի պատրիարքը, որ երեկ հասաւ Պքերքէ, յայտնեց, որ ինք կը զօրակցի լիբանանցի ժողովուրդի պահանջներուն՝ մերժելով հանրային կալաւաններուն դէմ գործուած խափանարարական արարքները:

Ռայի պատրիարքը կոչ ուղղեց տնտեսական արտակարգ իրավիճակ յայտարարելու, ինչպէս նաեւ օրական դրութեամբ կառավարութեան նիստեր գումարելու՝ ներկայ հարցերուն լուծումներ գտնելու եւ զանոնք գործադրելու նպատակով:

Կը նախատեսուի, որ Մարոնի եպիսկոպոսներու խորհուրդը այսօր գումարէ արտակարգ նիստ

մը եւ բաւական խիստ ոճի հաղորդագրութիւն մը հրապարակէ՝ իբրեւ անդրադարձ երկրին մէջ տիրող ներկայ իրավիճակին:

Լիբանանեան բանակը իր կարգին կոչ ուղղեց քաղաքացիներուն իրենց իրաւունքներուն, արժանապատուութեան եւ օրապահիկին համար խաղաղ կերպով ցոյց կատարելու՝ առանց արտօսելու, որ անոնք հանրային կալուածներուն դէմ յարձակում գործեն:

Լիբանանեան բանակը ամբողջական զօրակցութիւն յայտնեց ժողովուրդին արդարացի պոռթկումին՝ զայն յորդորելով անսալ ապահովութեան ուժերուն ցուցմունքներուն:

Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարութենէն պաշտօնատար մը երեկ գիշեր հարցազրոյցի մը ընթացքին զօրակցութիւն յայտնեց լիբանանցի ժողովուրդին խաղաղ ցոյց կատարելու իրաւունքին: Ան նշեց, որ տասնամեակներ շարունակ տիրող վատ ընտրանքները Լիբանանը գետեղած են տնտեսական քայքայման եզրին՝ մաղթելով, որ այս ցոյցերը Պէյրութը մղեն դէպի տնտեսական բարեկարգումներ:

Նշենք, որ պետական հաստատութիւններու պաշտօնեաները, ինչպէս նաեւ Աշխատաւորական ընդհանուր համադաշնակցութիւնը այսօր ընդհանուր գործադուլ յայտարարած են: Դրամատուներու միութեան որոշումով դրամատուները այսօր՝ երկուշաբթի, 21 հոկտեմբեր 2019-ին, իրենց դռները փակ պիտի պահեն, իսկ կրթութեան նախարարութիւնը կոչ ուղղեց պետական եւ սեփական դպրոցներու ու համալսարաններու տնօրէններուն, որ իրենց գտնուած վայրին համաձայն որոշեն, թէ այսօր իրենց դռները փակ պիտի պահեն, թէ՛ դպրոցական սովորական օր մը պիտի ունենան:

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ. «ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ ՀՐԱՊԱՐԱՐԱԿԱՅԻՆ ԽՈՍՏՈՒՄ ՊԵՏՔ Է ՏԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ՝ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄՆԵՐՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՅԻՆ ՇՈՒՏՈՎ ՍԿՍԵԼՈՒ»



Երեկ Արամ Ա. կաթողիկոս Լիբանանի մէջ տեղի ունեցող ժողովրդային ցոյցերուն վերաբերեալ կատարեց հետեւեալ յայտարարութիւնը.

«Լիբանանի ժողովուրդը փողոց իջած է: Լիբանանի պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով ամբողջ ժողովուրդը, առանց կոստական, համայնքային ու քաղաքական տարբերութեան, իր պահանջները յստակօրէն կը պարզէ պետական իշխանութեան: Ըսած ենք ու կը կրկնենք. կը բաժնենք ժողովուրդին պոռթկումը եւ արդար սպասումը:

Նման կացութեան դիմաց, անհրաժեշտ է խոհեմ ու իրապաշտ մօտեցում ունենալ: Զգացական արտայայտութիւններ ու հապճեպ քայլեր եւ քաղաքական շահարկումի փորձեր կրնան կացութիւնը անելի սրել: Քաղաքական պատասխանատուներ պէտք է հեռու մնան յանցանոր փնտռելու ու գիրար այպանելու մօտեցումներէն: Առաջ-նահերթը եւ իմասականը ժողովուրդը համոզող գործնական քայլերու դիմել է: Ժողովրդային յեղափոխութեան առաջին իսկ օրը Մեր տեսակէտը պարզեցինք՝ երկիրը տնտեսական տագնապէն դուրս բերելու միտող: Նոյնը կը կրկնենք.

1) Նկատի ունենալով ստեղծուած կացութիւնը, իր զանազան երեսներով ու հետեւանքներով, ինչպէս նաեւ նկատի ունենալով, թէ ներկայ կառավարութեան մաս կը կազմեն Լիբանանի քաղաքական բոլոր կուսակցութիւնները, անհրաժեշտ է, որ ներկայ կառավարութիւնը շարունակէ մնալ: Անոր հեռացումը կրնայ նորանոր բարդութիւններ ստեղծել եւ երկիրը անորոշութեան մատնել:

2) Անհրաժեշտ է, որ բարձրագոյն աստիճանի պետական պատասխանատուներն ու կառավարութիւնը, քաղաքական բոլոր կողմերուն ամբողջական աջակցութեամբ ու յանձնառութեամբ, հրապարակային խոստում տան ժողովուրդին, թէ շուտով պիտի դիմեն ժողովուրդին կեանքը բարելաւող գործնական քայլերու:

3) Տրուած հրապարակային խոստումին ու կատարած գրաւոր յանձնառութեան մէջ պէտք է յստակօրէն ճշդոյնն այն գործնական քայլերը, որոնց կառավարութիւնը շուտով պիտի դիմէ՝ տնտեսական, ընկերային, առողջապահական, կրթական, վարչական եւ այլ բնագաւառներու մէջ:

Շար.ը՝ էջ 8

ՄԱՀԱՉԳ

ԼՕԽ-ի «Արցախ» մասնաճիւղի վարչութիւնը կը գումծէ իր շրջանի հաւատաւոր անդամին՝

ԱՐՇԱԼՈՅՍ ԹԵՐԶԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ ուրբաթ, 18 հոկտեմբեր 2019-ին:

ՄԱՀԱՉԳ

Տիար Զամբարձում Թերզեան Տեր եւ տիկին Յակոբ Թերզեան եւ զաւակունք Տեր եւ տիկին Ռաֆֆի Սիւլեան Տիկին Կարինէ Թերզեան-Մուրաբրի եւ զաւակը Տեր եւ տիկին Փաթրիք Սիւլեան եւ զաւակունք Տեր եւ տիկին Սեւակ Սիւլեան եւ զաւակը Տեր եւ տիկին Սերժ Տէքըմենճեան Թերզեան եւ Գործեան ընտանիքներ Սիւլեան եւ Տէքըմենճեան ընտանիքներ Լուսինեան եւ Մամբուրեան ընտանիքներ Մենէսիկչեան եւ Փանոսեան ընտանիքներ Սաատ ընտանիք եւ համայն ազգականներ կը գումծեն իրենց կնոջ, մօր, մեծ մօր եւ հարազատին՝

ԱՐՇԱԼՈՅՍ ԹԵՐԶԵԱՆԻ

(Ծնեալ՝ ԳՈՐԾԵԱՆ, 1937-ին)

մահը, որ պատահեցաւ ուրբաթ, 18 հոկտեմբեր 2019-ին, առաւօտեան ժամը 3:00-ին:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարւի այսօր՝ երկուշաբթի, 21 հոկտեմբերին, կէսօրէ ետք ժամը 3:00-ին, Նորաշէնի Սրբոց Վարդանանց եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Զամուտի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայս ընդունիլ իբրեւ մահազոյ:
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին յետ թաղման արարողութեան, մինչեւ երեկոյեան ժամը 7:00, Ազգային առաջնորդարանի «Երջօ Սամուէլեան-Եռագոյն» սրահին մէջ, ինչպէս նաեւ երեքշաբթի, 22, չորեքշաբթի, 23 հոկտեմբերին, կէսօրէ առաջ ժամը 11:00-էն մինչեւ երեկոյեան ժամը 7:00, Նոյն վայրին մէջ:

«ԱԶԳԱԿ»-Ի ԱՐԱԳ ԼՐԱՀՈՍԸ՝ ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹԵԱՄԲ



Անոնք, որոնք ներբեռնած են «Ազգակ»-ի «Էփ»-ը, նկատած պիտի ըլլան, որ լիբանանեան քաղաքական բեմի վերջին զարգացումներուն համաժամանակ «Ազգակ»-ի արագ լրահոսը կ'աշխատի արտակարգ դրութեամբ: Մինչեւ առաւօտեան կանուխ ժամեր «Ազգակ»-ի «Էփ»-ին գրանցուած ընթերցողները արագակշռոյթ դրութեամբ կը ստանան վերջին իրադարձութիւններուն մասին լրատուութիւնները: Կը նկատենք, որ բազմաազգար ներբեռնողներուն թիւը արագօրէն կը համալրուի նոր հետեւողներով: «Ազգակ»-ի խմբագրակազմը իր պար-

տականութիւնը սեպեց առօրեայ թերթի խմբագրական աշխատանքներուն եւ կայքի ու ընկերային ցանցերու անընդհատ թարմացումներուն առընթեր լիբանանեան իրադարձութիւններուն հետ համաժամանակեայ քայլ պահել եւ արագ լրահոսով հասնիլ Լիբանանի թէ արտասահմանի իր ընթերցողները:

Անոնք, որոնք կ'ուզեն հրատապ իրադրութիւններուն հետեւիլ կրնան ներբեռնել «Ազգակ»-ի «Էփ»-ը՝ իրենց բջիջային հեռախօսներուն (Էփըլ եւ Էստրոյտ) ճամբով որոնելով aztagdaily-ն:

«ՆՈՒՎԵԼ Տ'ԱՐՄԵՆԻ»-Ի ՎՐԱՅ ՅԱՐՉԱԿՈՒՄ



Մինչ այդ, «Նուվել Տ'Արմենի»-ն «Թուիթըր»-ի վրայ լուսանկար հրապարակած է, ուր ներկայացուցած է գործուած աները:

Հայկական ամսագիրը թուիթըրեան էջով յարձակումը կը կապէ գլխաւոր խմբագիր Արա Թորանեանի՝ Փարիզի մէջ տեղի ունեցող հակաթրքական շարժումներուն մասնակցելու եւ Նուրիոյ քիւրտերուն աջակցութիւն յայտնելու հետ:

Նշենք, որ խմբագրութեան վրայ յարձակումը տեղի ունեցած է 19-20 հոկտեմբերի գիշերը: Յարձակողները, խմբագրութեան տեղեկութիւններով՝ գրաւած են 3 համակարգիչ եւ 1 լուսանկարչական խցիկ, որոնք մէջ եղած են խմբագրական գաղտնիք պարունակող տեղեկութիւններ, ինչպէս նաեւ ամսագիրի յառաջիկայ թիւերու լրագրական նիւթեր:

ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԳԼԽԱՌՈՐՈՒԹԵԱՄԲ ՏԵՂԻ ՌԻՆԵՅԱԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՆԻՍՏ



Հայաստանի Հանրապետութեան վարչապետ Նիկոլ Փաշինեանի գլխաւորութեամբ անցեալ ուրբաթ օր տեղի ունեցաւ Անվտանգութեան խորհուրդի նախապէս ծրագրուած արտակարգ նիստը: Այս մասին յայտնեց Հայաստանի վարչապետի աշխատակազմի տեղեկատուութեան եւ հասարակութեան հետ կապերու վարչութիւնը:

Ողջունելով ներկայները՝ վարչապետը ըսաւ, որ նիստը կը համընկնի շրջանին մէջ տեղի ունեցող բուռն զարգացումներու, ուստի նիստին ընթացքին ընկալուածներու նիւթ պիտի ըլլան անոնք: «Վստահաբար, միտքեր, տեղեկատուութիւն պիտի փոխանակենք վերջին շրջանին մեր ունեցած միջազգային շփումներուն վերաբերեալ, նաեւ ընկալուածներ պիտի ունենանք Արցախի տագնապի խաղաղ լուծման ընթացիկ իրավիճակին վերաբերեալ: Անվտանգութեան խորհուրդի նիստերը շատ կարեւոր են, որովհետեւ մեր անվտանգութեան հարցերու ծիրին մէջ մենք որոշումներ կու տանք նաեւ տնտեսական բնոյթի, քաղաքական բնոյթի, եւ են համոզուած են, որ այսօր մեր կողմէ կայացուող որոշումները կը ծառայեն մեր երկրի անվտանգութեան եւ բա-

րեկցութեան հետագայ մակարդակի բարձրացման», ըսաւ վարչապետ Նիկոլ Փաշինեան:

ՄԱՀԱՉԳ

Տիկին Մարկօ Անտոնեան եւ զաւակները՝

Ասպետ եւ Մարիա Տեր եւ տիկին Ռաֆայէլ եւ Ալին Անտոնեան Տեր եւ տիկին Անտոն Անտոնեան եւ զաւակունք Օրոյ. Մատլեն Անտոնեան Տեր եւ տիկին Ճան եւ Սոնա Թաւաքեան եւ զաւակունք Տիկին Սիրուիի Թաւաքեան Տեր եւ տիկին տղթ. Յովհաննէս Թաւաքեան եւ զաւակունք

Տեր եւ տիկին Գեորգ Թաւաքեան եւ զաւակունք Տեր եւ տիկին Գեորգ եւ Էլիզապէթ Գազանճեան եւ զաւակունք

Տեր եւ տիկին Յակոբ Տէմիրճեան եւ դուստրը՝ Քրիսթինա Անտոնեան եւ Թաւաքեան ընտանիքներ Փամպուրեան եւ Աշգարեան ընտանիքներ եւ համայն ազգականներ կը գումծեն իրենց ամուսնոյն, հօր, եղբօր, քեռայրին եւ հարազատին՝

ԿԱՐՕ ԱՆՏՈՆԵԱՆԻ

(Ծնեալ՝ Այճճար, 1947-ին)

անակնկալ մահը, որ պատահեցաւ շաբաթ, 19 հոկտեմբեր 2019-ին, կէսօրէ ետք ժամը 2:00-ին:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարւի այսօր՝ երկուշաբթի, 21 հոկտեմբերին, կէսօրէ ետք ժամը 1:00-ին, Այնճարի Հայ կաթողիկէ Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Այնճարի գերեզմանատունը:

- Ներկայս ընդունիլ իբրեւ մահազոյ:
- Ցաւակցութիւնները պիտի ընդունուին յետ թաղման արարողութեան, եկեղեցւոյ սրահին մէջ, իսկ երեքշաբթի, 22 հոկտեմբերին, Պուրճ Զամուտի Հայ կաթողիկէ Ս. Փրկիչ եկեղեցւոյ սրահին մէջ, առաւօտեան ժամը 11:00-էն մինչեւ երեկոյեան ժամը 7:00:

ԴԱԻԻԹ ԻՇԽԱՆԵԱՆ. «ՄԵՆՔ ՈՒՆԻՆՔ ԲԱԽԱՐԱՐ ՀԻՄՔԵՐ ԱՐՑԱԽԻ ՄԷՉ ԱԶԱՏ, ԱՆԿԱԽ ԵՒ ԹԱՓԱՆՑԻԿ ԸՆՏՐՈՒԹԻՆՆԵՐ ԿԱՅԱՅՆԵԼՈՒ»



Արցախի արդարադատութեան նախարարութեան մէջ արձանագրուած 22 կուսակցութիւններէն 15-ին հետ ՅՅԴ-ն հանդիպած է, 3 կուսակցութիւն հրաժարած է հանդիպելէ, միւս կուսակցութիւններուն հետ չեն յաջողած կապ հաստատել, որովհետեւ չեն եղած կուսակցութեան պատասխանատուներ: Այս մասին «Նիուզ»-ին հետ գրոյցի մը ընթացքին ըսաւ ՅՅԴ Արցախի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ Դաւիթ Իշխանեան՝ անդրադառնալով Արցախի նախագահական ընտրութիւններուն ընդառաջ ՅՅԴ-ն նախաձեռնած միջկուսակցական ընկալուածներուն:

Ան տեղեկացուց, որ ընկալուածներու առաջին փուլը աւարտած է, եւ արդէն կան համախոհութեան որոշ նշաններ. «Առաջին փուլը աւարտած ենք, մենք ունինք արդէն որոշակի պատկերացումներ, ինչպէս նաեւ ընկալուածներու արդիւնքները: Առաջին փուլի մեր ընկալուածները կը վերաբերին միասնական օրակարգի հարցերուն, այն օրակարգին, որ մեր կողմէ ներկայացուած է քաղաքական ուժերուն, եւ այդ օրակարգի շուրջ ընդհանուր համախոհութեան եւ համաձայնութեան առաջին ծիւերը կան, այսինքն՝ քաղաքական ուժերը ողջունած են մեր նախաձեռնութիւնը, եւ յստակ դիրքորոշում ներկայացուած է օրակարգին վերաբերեալ, սակայն կը կարծեմ՝ երկրորդ փուլի արդիւնքով կրնանք վերջնական խօսիլ ընտրութիւններու մասնակցութեան ձեւին, ձեւաչափին մասին, որովհետեւ տարբեր պատկերացումներ կան նաեւ շարք մը կուսակցութիւններու մօտ, յատկապէս այն կուսակցութիւններուն, որոնք արդէն կը փորձեն անձի շուրջ ձեւաւորել իրենց ընդհանուր քաղաքականութիւնը եւ իրենց ապագայ քաղաքական քայլերը: Այդ առումով թերեւս քիչ մը կանուխ է վերջնական տեսակէտ ներկայացնելու, բայց յառաջիկայ մէկ ամսուան ընթացքին կը կարծեմ՝ պիտի ամբողջանայ, եւ արդէն վերջնականօրէն պիտի ունենանք մեր կուսակցութեան յստակ դիրքորոշումը»:

Իշխանեան նշեց, որ ՅՅԴ-ի նախաձեռնած ընկալուածներուն չեն մասնակցած այն կուսակցութիւնները, որոնք ունին ինքնուրոյն օրակարգ. «Երեք կուսակցութիւն հրաժարած է ընդհանրապէս մեզի հետ հանդիպելէ, մեկը խորհրդարանին մէջ գործող ընդդիմադիր «Ազգային վերածնունդ» կուսակցութիւնը եւ արտախորհրդարանական «Հանրապետութիւն» եւ «Մեր տունը Հայաստանն է» կուսակցութիւնները, որոնք ներկայացուցին, որ ունին իրենց օրակարգը եւ իրենց սեփական թեկնածուն»:

Մինչդեռ «Ազատ հայրենիք» կուսակցութեան հետ ՅՅԴ արցախեան թեւը կրցած է որոշակի փոխհամաձայնութիւն ձեւաւորել, թէեւ ոչ վերջնական, քանի որ «Ազատ հայրենիք»-ը, ըստ Դաւիթ Իշխանեանի, կեդրոնացած է իր թեկնածուն վրայ. «Ինչ կը վերաբերի «Ազատ հայրենիք»-ի հետ մեր ընկալումներուն, թերեւս ընդհանուր ընկալումը եւ տեղեկատուութիւնը քիչ մը այլ ձեւով կը ներկայացուին»:

Դաւիթ Իշխանեան նշեց նաեւ, որ իրենց ակնկալած խորքային ընկալուածները երբեմն չեն յաջողած, քանի որ որոշ կուսակցութիւններ իբրեւ այդպիսին ձեւաւորած չէին. «Շարք մը այսպէս կոչուած կուսակցութիւններու հետ ընկալուածները շատ մակերեսային էին, որովհետեւ դասական առումով այդ կուսակցութիւնները չկան եւ չեն գործեր, խորհրդարանական կամ նախագահական ընտրութիւններու նախաշէմին ձեւաւորած կուսակցութիւններ են, որոնք կարելի է նկատել մարդ-կուսակցութիւններ»:

Դաւիթ Իշխանեան նաեւ ճշդեց, որ ընկալուածները համաձայնեցուած թեկնածուի շուրջ են եւ ոչ թէ միասնական, ընդ որում, թեկնածուն պիտի անդրադառնան միայն ընդհանուր օրակարգին շուրջ համաձայնելու եւ ատիկա հաստատելէ ետք:

Իսկ 2020-ին Դաշնակցութիւնը չ'ակնկալել, որ նախագահական ընտրութիւնները տեղի ունենան իտալական, բայց նաեւ Դաւիթ Իշխանեանի խօսքով՝ ակընյայտ է, որ տարուէ տարի ընտրական **մեքանիզմները** կը կատարելագործուին:

«Ընտրական **մեքանիզմը** Արցախի մէջ տարուէ տարի կատարելագործուած է, բայց այդ ամէնը տակաւին իտալական չէ, եւ թերեւս 2020-ի ընտրութիւնները չեն կրնար ըլլալ այն իտալական ընտրութիւնները, զորս մենք կ'երազենք եւ որոնք կը ձգտինք, բայց որ իւրաքանչիւր ընտրութիւն մէկ քայլ առջեւ էր, ատիկա ակընյայտ է: Այդ ամէնը մեզի կը թելադրեն, որ մենք ունինք բաւարար հիմքեր ազատ, անկախ, թափանցիկ ընտրութիւններ կայացնելու», նշեց ան:


ՌՈՒԲԷՆ ՅՈՎՍԷՓԵԱՆԻ 80-ԱՄԵԱԿԻ ՆՇՈՒՄ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ

Գրող, հրապարակախօս, հասարակական-քաղաքական գործիչ, բազմաթիվ վեպերով թարգմանիչ, թատերագիր Ռուբեն Յովսեփեանի 80-ամեակին առիթով Երեւանի մէջ կազմակերպուեցաւ յիշատակի երեկոյին, որուն ներկայ եղան ընկերները, մտերիմները, գնահատուեցաւ Յովսեփեանի ստեղծագործական ու հասարակական քաղաքական երկարամեայ ուղին։

Յուշ-երեկոյին խօսք առին Զամազգային հայ կրթական եւ մշակութային միութեան Կեդրոնական վարչութեան ատենապետ Սկրտիչ Մկրտիչեան եւ ԶՅԴ Բիւրոյի անդամ Արսեն Զամբարձուեան։ Այս էջով կը ներկայացնենք անոնց խօսքերը։

ՄԱՐԴԿԱՅՆՈՒԹԻՒՆՆ ՌՈՒ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ ՌՈՒԲԷՆ ՅՈՎՍԷՓԵԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՅԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Այն յստակ տպւորութիւնը կայ, որ մեր հասարակութեան մէջ Ռուբեն Յովսեփեանի նման արժեքաւոր մարդիկ իրենց արժանի տեղը չեն գրաւեր մարդոց միտքին մէջ, ո՛չ, ընդհանրապէս, իրենց կենդանութեան, ո՛չ ալ յաճախ՝ յետմահու։ Ռուբեն Յովսեփեանի պարագան մանաւանդ եզակի է, որովհետեւ իր մահէն երեք տարի անց, այսօրուանին նմանող նախաձեռնութիւններու կը սպասենք, որպէսզի վեր առնուին անոր յատկութիւնները՝ կարենալ անդրադառնալու համար իր ատենին մեր ունեցած կորուստի ծանրութեան։



Յեղինակութիւններ կան, որոնք, իրենց ողջութեան կատարած դրական գործին առընթեր, ճիգ կը թափեն նաեւ յաւիտենականութեան մէջ իրենց անունը յիշողութիւններու մէջ մարագրելու ուղղութեամբ՝ ուղղակի կամ անուղղակի ինքնաքարոզութեամբ։ Տարբեր է Ռուբեն Յովսեփեանի նման արժեքներու տեսակը։ Այս տեսակը ոչ միայն իր քարոզչութիւնը չ'ընէր, այլ, ընդհակառակը, յատուկ ճիգ կը թափէ շուրջ մէջ մնալու համար։ Զասարակութեան պարտականութիւնն է այսպիսի անհատներու քարոզչութիւնը ինքը ստանձնելու, որովհետեւ այդպիսի տիպարներու յիշատակէն ամեն շատ օգտուողը ամեն պարագայի ինքը՝ հասարակութիւնը կ'ըլլայ։ Կարելի չէ թերագնահատել Ռուբեն Յովսեփեանի նման առաքելատիպ մարդոց կարեւորութիւնը սերունդներու գաղափարական թէ մարդկային, թէ ալ ազգային դաստիարակութեան ոլորտներէն ներս։

Իսկ մարդկայնութիւնն ու հայրենասիրութիւնը Ռուբեն Յովսեփեանի հիմնական յատկանիշները կազմած են արդէն իր անէի քան եօթնամեայումս մարդկային կենսւնի ընթացքին. անոնք փառաւոր կերպով կը ճառագայթեն յաւերժութեան համար իր կողմէ մեզի ժառանգ թողուած գործերուն մէջ։ Պատահելիքն ու երիտասարդները պէտք ունին Ռուբեն Յովսեփեանի նման օրինակելի բնորոշներու։

Յայրենասիրութիւն կը բուրբ իր ամբողջ գործը, իսկ մարդկայնութիւնը իւրաքանչիւր տողի մէջ է։ Մարդկային ազնիւ վերաբերումը իր գեղարուեստական գործին մէջ չ'երեւիր միայն, այլ նաեւ իր բարձրորակ անհատականութեան մէջ հիմնական քաղաքիչն է, որ ներկայ էր առօրեայի մէջ իսկ՝ ամեն տեսակի յարաբերութիւններու ընթացքին։

«Այս աշխարհում ո՛չ ոք, ո՛չ ոք չի ուզում հեքիաթը իրականութիւն դարձնել» ըսելով հանդերձ, եւ միաժամանակ անդրադարձած է, որ՝ «Այս աշխարհում ամենից, ամենից դժուար բանը հեքիաթ իրականութիւն դարձնելն է»։ Այս երեւութական հակադրութեան մէջ կը թաքնուի Ռուբեն Յովսեփեանի անհուն լուսատեսութիւնը։ Դեքիաթը իրականութիւն դարձնելը դժուար, բայց անյոյս գործ մը չէ իրեն համար։ Դժուարութիւնը, սակայն, շատերու մօտ կը յառաջացնէ կամքի ընկրկում։ Բացառիկ են դժուարութիւնները պայքարով յաղթահարողները։

Այդպէս է իր հեքիաթին մէջ ապրող տղուն հայրը։ Դեքիաթին եզրակացութիւնը երազի իրականացումն է, երբ երազող տղուն հայրը ամեն արդար միջոց ի գործ կը դնէ, կը տառապի, կը մսի եւ իր առողջութեան վնաս հասցնելու գնով տղուն բարձին տակ ճիշդ ժամանակին կը հասցնէ իր զաւկին երազած չորս նուէրը։

Ռուբեն Յովսեփեանին համար կարելի՛ է ուրեմն հեքիաթին իրականացումը։

ՄԱՐՏԻՉ ՄԱՐՏԻՉԵԱՆ

Երեւան, 16 հոկտեմբեր 2019

ՀԱՅ ՄԱՐԴՈՒ ԱՋԳԱՅԻՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ ՌՈՒ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԺԷՔՆԵՐ ԽՏԱՅՆՈՂԸ



Այսօր այստեղ ենք հաւաքուել մեր յարգանքն ու խոնարհումը բերելու եւ արժանին մատուցելու Ռուբեն Յովսեփեանին ու կշելու նրա 80-ամեայ յոբելեանը։

Յոբելեանական այս երեկոյի անցկացման վայրը ինքնին խորհրդանշական է՝ որովհետեւ Ռուբեն Յովսեփեանը մշակոյթի մարդ էր, բառի բուն իմաստով մտաւորական։ Գրող, թարգմանիչ, խմբագիր, թատերագիր, քաղաքական գործիչ, բայց՝ նախ եւ առաջ՝ մտաւորական, ով իր մէջ խտացնում էր հայ մարդու ազգային, բարոյական ու գեղագիտական արժեքները։

Մասնագիտութեամբ երկրաբան, բայց նաեւ ու շատ աւելի «մարդաբան» էր, մարդկանց տեսնելու, զգալու, հասկանալու զարմանալի յատկութիւն ունէր։ Եւ պատահական չէ, որ իր ստեղծագործութիւնների առանցքում հենց մարդն է՝ իր աշխարհընկալմամբ ու իր կենցաղով։

Չունայ էր խօսքի մէջ, որովհետեւ գիտէր խօսքի արժեքը ու երբեք չէր փորձում կարծիք ու տեսակետ պարտադրել։ Զամեստ էր, խուսափում էր լինել ուշադրութեան կենտրոնում, նախընտրում էր գործը ու չէր սիրում տարփողել այդ մասին։ Խորութեամբ զգում էր իրականութեան տագնապները, ինքնամփոփ էր, բայց մտերմիկ շրջապատում՝ աշխուժ գրուցակից։

Խորապէս ազգային էր՝ մինչեւ վերջին նետրոց, բայց գերծ ազգային սնապարծութիւնից, համամարդկային արժեքների ճշմարիտ գնահատող։ Թուլթոյ, Զեխով, Մարքես թարգմանելու համար երեւի թէ մի քիչ այդ տեսակը պէտք է լինել, այդ մտածողութիւնն ու աշխարհընկալումն ունենալ։ Ու առանց չափազանցութեան Ռուբեն Յովսեփեանն այդպիսին էր։

Կրօնը ընկերոջ իրաւունքով չէմ կարող չանդադառնալ Ռուբեն Յովսեփեան քաղաքական գործչին՝ ընկեր Ռուբենին։ Զարգացողներից մեկում, անդրադառնալով Դաշնակցութեան անդամակցելու հարցին՝ Ռուբեն Յովսեփեանն իրեն բնորոշ ուղղամտութեամբ ասել է. «Որովհետեւ ազգայինի կուտակումներն էին առաջանում շատերիս մէջ, եւ երբ Դաշնակցութիւնը պիտի վերաբացուէր Զայաստանում, եւ եթէ ես մի տեղ պիտի լինէի, ապա միայն այնտեղ պիտի լինէի»։ Յիրաւի, Ռուբեն Յովսեփեանի պարագայում այլ ընտրութիւն հնարաւոր չէր պատկերացնել։

Եւ յատկանշական է, որ Զայաստանում Դաշնակցութեան վերընձիւղման գործում նրան կարելու դերակատարութիւն էր վերապահուած, որովհետեւ Ռուբեն Յովսեփեան տեսակի պահանջ կար։

Զակառակ այն իրողութեան որ Ռուբեն Յովսեփեանը երկար տարիներ եղել է Դաշնակցութեան ղեկավար մարմինների անդամ, չի դարձնէ կուսակցական պաշտօնեայ, այլ իր մտաւորական տեսակով, լայնախոհութեամբ ու շրջահայեցութեամբ նոր հորիզոններ է բացել Դաշնակցութեան մտածողութեան մէջ։ Ինչպէս միւս ասպարէզներում, քաղաքականութեան մէջ եւս Ռուբեն Յովսեփեանն իր գործի, ընդհանուր գործի ազնուականն ու մշակն էր՝ սկզբունքային, ուղղամիտ, խօսքի մէջ ժլատ, գործի մէջ՝ շռայլ։ Անկախ ունեցած հանգամանքից ու զբաղեցրած դիրքից՝ միշտ յանձնառու ու պարկեշտ։

Այսպիսին է Ռուբեն Յովսեփեանը, ընկեր Ռուբենը իմ յիշողութիւններում՝ նկարագիր ունեցող, ինքնատիպ հայ մարդ, ով գիտէր, որ ամենից դժուարը հեքիաթն իրականութիւն դարձնելն է, բայց նաեւ գիտէր, որ դա իր կոչումն է, իր պայքարը, իր բաժին պատասխանատւութիւնը»։

ԱՐՄԵՆ ԶԱՄԲԱՐԶՈՒՄԵԱՆ

Երեւան, 16 հոկտեմբեր 2019

ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԵՒ ԱՆՀԱՏՆԵՐՈՒ ՌԻՇԱԳՐՈՒԹԵԱՆ

Այն միութիւններն ու այն անհատները, որոնք կ'ուզեն դասախօսական ձեռնարկներու եւ ընդունելութիւններու համար «Ազգակ»-ի «Փիւնիկ» սրահը օգտագործել, կրնան հեռաձայնել «Ազգակ»-ի խմբագրատուն, հեռ. 258526-260115-241274, երկուշաբթիէն ուրբաթ օրերը, երեկոյեան ժամը 5:30-էն մինչեւ ժամը 7:30:

ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԿԸ ՓՆՏՈՒԷ ՌՈՒԲԷՆ ՅՈՎՍԷՓԵԱՆԻ ՏԵՍԱԿԸ



Դժուար է յօբելեանական հանդիսութեան մը ընթացքին ժամանակի նեղ պայմաններու մէջ տեղաւորուելով բանաձեւել կերպարը մարդու մը, հայու մը, որուն հետ շփման, թեւ յաճախակի, սակայն ոչ երկարատեւ առիթները բաւարար եղած են խորհրդածելու եզակի անձնաւորութեան մը մասին, որ իր սակաւախօսութեամբ, առերեւոյթ խստաբարոյ թուացող նայուածքով, սակայն անչափելի խորանարդներով խորունկ ներաշխարհով եւ դիպուկ արտայայտութիւններով կը յաջողի առաջին վայրկեանէն տպաւորել, հմայել, առիւնել։

Դաշնակցութեան վերահայրենացման կամ կազմակերպական կառոյցի բացայայտման օրերն էին, եւ հայաստանեան կազմակերպութեան հրապարակած առաջին յայտարարութեան տակ կար ստորագրութիւնը Ռուբեն Յովսեփեանին։

Այդ օրերու գերիանդամաւ, եւ հսկայական տարողութեամբ նոր զսպանակումներով վերանորոգուած ու վերալիցքաւորուած մթնոլորտին հաղորդ մարդը պէտք է յիշէ այն տարերային հետաքրքրութեան մղումը բոլորին, իմանալու համար թէ ովքե՞ր են հայրենի առաջին դաշնակցականները, որոնք լուռ, լուսարձակներէ հեռու ձեւաւորած են Դաշնակցութեան հայաստանեան կառոյցը։ Եւ այդ ովքերու շարքին անպայման իմանալու, թէ որո՞ւ կը պատկանի պատմական պատիւը՝ ստորագրելու Դաշնակցութեան վերահայրենացումը ամրագրող փաստաթուղթը։

90-ական թուականներուն սկիզբը մեզի՝ երիտասարդ դաշնակցականներուս համար, կը պատկերացներ Դաշնակցութեան հիմնադիրներուն հետեւողութեամբ աշխատանք տանողներու խմբակ մը, հիմնադիրներուն կերպարներու ելութիւնը իւրացուցած եւ անոնց երկաթեայ կամբներուն հաղորդ, Դաշնակցութեան ելութեան հետ նոյնացուած մարդիկ, որոնք կոչուած էին նոր հունաւորում տալու հայ կենսքին ընդհանրապէս հայկական աշխարհին։

Եւ այդ շարքին առաջին հերթին վրայ կու գար պատկերը յաղթական կանգնած Ռուբեն Յովսեփեանին։ Փաստը բաւարար էր, որ անձկութեամբ սպասելիք սեղմելու Դաշնակցութեան առաջին յայտարարութիւնը ստորագրած գործիչին ձեռքը։

Կը պատահի երբեմն, որ հեռաւոր ճամբով անձի մը նկատմամբ կազմուած տպաւորութիւնն մը փուլ գայ, երբ մօտէն ճանչնալու, գրուցելու առիթ ստեղծուի պատահականօրէն։ Այս տեսութիւնը լիովին շրջուած է Ռուբեն Յովսեփեանի պարագային։ Գրութիւններով, հրապարակախօսութեամբ կամ հրապարակագրութեամբ ճանչցուածը անելի կաղնիացած է Ֆիգիբական ճանաչումի ընդմէջէն, երբ սկզբունքայնութիւնը, գաղափարականութիւնը, մարդկայնութիւնն ու ազգային նկարագիրը առաքելայացած են անմիջականօրէն։

Եւ այս բոլորը ամփոփ գիծերու մէջ, երբեմն ոչ հեզասահ մատչելիութեամբ, յաճախ պարտաւորեցնող խորքայնութեամբ, բացառիկ հեղութեամբ եւ նկարագրային պարզութեամբ բացուող համատարած յարգանքի բնական տիրականութեամբ։

Մարդը ճանչնալէն ետք էր, որ անելի յստակ կրցանք պատկերացնել, որ Դաշնակցութեան հայրենացումի նախապատրաստական աշխատանքները ինչպէս տարուած են՝ լուսարձակներէ հեռու, լուռ, ոչ-ցունցական, անշահախնդիր, եւ Դաշնակցութեան 100-ամեակին իր բանախօսութեան բառերով անմասցորդ եւ անկաշառ ծառայելու անտեղիտալի վճռակամութեամբ։ Ռուբեն Յովսեփեանի անձը ճանչցողները, առանց այդ օրերուն Զայաստան գտնուելուն, կրնան յստակ պատկերացում ունենալ այդ օրերուն աշխատանքին բնոյթին, հաւաքական գործելաձիւնին, առանց ամպագոռոռ բարձրածայնումներու ձեւաւորուած ու կայացած յարգանքի համընդհանուր մթնոլորտին հանդէպ Դաշնակցութեան։ Եւ մէկը անելի են այն վկայութիւնները, որոնց համամայն, նոյնիսկ Դաշնակցութեան կազմակերպական կառոյցի բացայայտումով քաղաքական անհանգստութիւն ապրող օրուան իշխանութիւնները ինքնապարտադրանքով գծուած յարգանքի գիծը կը պահէին անհպելի։

Դժուար է հակափաստարկելը, որ որեւէ գործի, հիմնարկի հաստատութեան հիմնադրութեան գործը եթէ կառուցուած է ճիշդ ձեւով, առողջ արմատներու վրայ, անկեղծ կը յաջողի դիմակայել ժամանակի ստեղծած անվերջանալի մարտահրաւիրները։ Զայաստանեան կազմակերպութեան հիմնադիր սերունդի գործը այդպիսին եղած պէտք է ըլլայ։ Փոթորիկները այնքան հար-

լածած են գայլն, այնքան հալածած, սակայն մեր կազմակերպութիւնը պահած է իր անսասնութիւնը: Այս արտակարգ անսասնութեան հիմը շաղախուած է Ռուբէն Յովսէփեաններու պատմակերտ աշխատանքով:

Կարելի է առարկել, որ սկսուած աշխատանքը, իբրեւ նորութիւն, իբրեւ նոր յոյսեր բերող հիմնական քայլ բնական կարգով ստեղծած էր յարգանքի հակազդեցութիւնը: Փաստը ցոյց տուաւ, որ անցողակիութեան մասին չէր խօսքը, հանգրուանային չէր յարգանքի զգացումը: Ռուբէն Յովսէփեանի նկատմամբ յարգանքը մնայուն երեւոյթ էր, որ կապ չուներ պարագայականութեան գործօսին հետ: Անձն էր, եութիւնը, խորքը, վարուելակերպը: Մէկ խօսքով անձին ընդմէջէն մարմնաւորուած արժէքային ամբողջ համակարգ մը:

Ռուբէն Յովսէփեանի ուսերուն կ'իյնար ծանր պարտականութիւն Պայաստանի օրուան իշխանութիւններուն կողմէ Պաշնակցութեան դէմ շղթայազերծուած ամենակրքոտ պայքարի օրերուն ղեկավարելու կուսակցութիւնը: Ձերբակալութիւններ, բանտարկութիւններ, մամուլի փակում, գրասենեակներու բռնագրաւում, դատավարութիւններ: Ահա այսպիսի պայմաններու մէջ էր, որ պէտք էր համակարգուէր աշխատանքը: Ականատեսը եղանք նման պայմաններու մէջ բացառիկ առողջ դատողութեան դրսեւորումներու, իշխանութիւններն ու պետութիւն-պետականութիւնը իրարմէ սահմանազատելու առողջ որողշումներուն, հակառակ հրահրումներուն արկածախնորութիւններու չներքաշւելուն, ամէն տեսակ հալածանքի դիմաց ինքնազսպւածութեան խոհեմ կեցուածքներու. մէկ խօսքով, անմաքորդ ծառայելու հրապարակային յանձնառութեան վերամարմարգրման վեհանձնագոյն օրինակներու իրականացման փաստին:

Պաշնակցութիւնը յաջողագոյն ձեւով կ'անցներ հայրենիքի մէջ իրեն պարտադրուած դառն քննութենէ մը: Իսկ այդ դժուարին յաջողութեան կերտումին մէջ մեծ էր դերակատարութիւնը Ռուբէն Յովսէփեանին: Պաշնակցութեան Պայաստանի կազմակերպութեան պահուածքը Պաշնակցութեան դասուած արժէքափերուն համահունչ էր եւ հարազատ: Թերեւս տարիներու չափով ոչ այնքան երկարատեւ Պաշնակցութեան շարքերը մուտք գործած մարդիկ դաշնակցականօրէն կը ղեկավարէին գործը եւ հայրենիքը կը փրկէին մեծագոյն փորձութենէ մը: Պատմական այս ժամանակահատուածին նման պատուաբեր ելքով մեր բոլորին դուրս գալուն մէջ մեծ էր ու հիմնարար դերակատարութիւնը Ռուբէն Յովսէփեանին:

Այժմեական հնչեղութիւն տալու համար անձին ամփոփ ներկայացումին՝ կեդրոնականք հայ-թուրք յարաբերութիւններու թեմային առնչուած քննարկումներուն՝ Ռուբէն Յովսէփեանի մտածումներէն հետեւեալ կետին վրայ.- Դասկնայիօրէն սահմանի բացման հետեւանքներուն մասին է բանավեճը, քննարկումը: Անդիանուր խորհրդածութիւններ պարզաբանելէ ետք արծարծուած գործընթացին մասին, ան ցարդ չպէտրուած թեմայի փակ գիծերը կը բանար, ուղղակի հարցը կը շօշափէր, առանց դիւանագիտական ոլորապտոյտներու մէջ կորսնցնելու հետեւողը: «Մենք վաղուց արդէն բացած ենք մեր հոգու սահմանները»:

Այնքան բնորոշ է հաստատումը ամբողջ նկարագիրին, վերլուծումին եւ մտածողութեան, որ մէկ նախադասութեամբ, դիպուկ խօսքով, շատ խորքային իմաստ պարփակող եւ երկար ատեն մտածել տուող յայտնութեամբ Ռուբէն Յովսէփեան կ'ուրուագծէ ամբողջ իրականութիւն մը, որ այլապէս մարդիկ, ժամեր ու ժամեր տրամադրելով, պիտի չյաջողէին ձեւ ու մարմին տալ հնչուող այսօրուան ահագանգին: Այսօրուան ահագանգին, թէ միեւնոյն քանի մը բառին մէջ կը փոխանցէ, թէ տաճնապ միայն այսօրուանը չէ. վաղուց ձեւաւորուած է, կազմուած ու հանգչած մեր ենթագիտակցութեան մէջ:

Եւ իրօք ա'յս է խնդիրը: Երբ ասպազգայինի դիմաց փակ են մեր հոգիի սահմանները, երբ հայութեան, Պայաստանին սպառնացող երեւոյթները հանգիստ ու հեգասահ ընկալելու դէմ արգելքներ կանգնած են մեր հոգիներուն մէջ, սահմանի բաց կամ փակ ըլլալը կը ստանայ երկրորդական նշանակութիւն եւ որեւէ ձեւով ազդեցութիւն չ'ունենար հայ մարդու բարոյահոգեբանական կերտուածքին վրայ: Երբ սակայն, բաց են ներաշխարհիդ սահմանները եւ այնտեղ ազգային գաղափարախօսութեամբ զինուած սահմանապահ զինուորներ չկան, թէկուզ ցամաքային փակ սահմանով, ոտնձգուած կ'ըլլայ արդէն ազգային անվտանգութիւնը:

Աւելի քան այժմեական է ընկ. Ռուբէնի հնչեցուցած ահագանգը: Անիկա չի վերաբերիր միայն հայ-թուրք յարաբերութիւններուն: Պայկական արժէքային ընդհանուր համակարգի անսասան պահպանման համար անփոխարինելի երաշխիք է ընդգծուած անհրաժեշտութիւնը: Պահպանել մեր հոգիի սահմանները՝ ազգային գաղափարախօսական սահմանապահ ուժերով, որպէսզի ապահովուի մեր ազգի ու պետութեան գոյութեան շարունակականութիւնը:

Նման այսօրուան ճգնաժամի օրերուն, հասարակութիւնները կը փնտռեն ճիշդ ուղին մասնացոյց ընողը: Վստաիւելի եւ հուաստի աղբիւրը: Ան, որ գանազան հանգրուաններու յաջողած է մնալ անբասիր, մաքրակենցաղ, բայց նաեւ պահած դիրքը, սկզբունքայնութիւնը, արժէքներուն նկատմամբ հուատարմութիւնը, կառչած՝ իր յանձնառութիւններուն:

Ահա ա'յս ստորոգելիներով օժտուած մարդոց է, որ կը նային հասարակութիւնները, կը սպասեն ցուցմունքի եւ մանաւանդ անվերապահ կը վստահին անոնց:

Կը խորիմ, որ բոլորս խորապէս համոզուած ենք, որ ժողովուրդը հայ կեանքի տարբեր ոլորտներու ղեկավարման համակարգերուն մէջ կը փնտռէ ա'յդ տեսակը: Ռուբէն Յովսէփեանի՝ տեսակը:

ՇԱՅՆ ՔԱՆՏԱՅԱՐԵԱՆ

** Խօսքը արտասանուած Ռուբէն Յովսէփեանի 70-ամեակին առիթով:*

Պէլորոբ, 2009

ՅԵՐԵՈՒՄ ԵՒ ՅՍՏԱԿԱՅՈՒՄ ԿԸ ՍՊԱՍԵՆՔ

Յայրենի մամուլին մէջ քանի մը օր առաջ «պայթեցաւ» լուր մը, թէ մշակոյթի, կրթութեան, գիտութեանց եւ մարմնակրթանքի նախարարութիւնը կ'առաջադրէ Պայաստանի բարձրագոյն ուսումնարաններու (ԲՈՒՀ) դասաւանդութեանց ծրագիրէն դուրս ձգել հայերէն լեզւի, հայոց պատմութեան եւ գրականութեան նիւթերը, կամ՝ գանոնք չընդգրկել իբրեւ պարտադիր դասանիւթ, ինչպէս որ կը տնօրինէ այժմու օրէնքը: Ըստ նոյն տեղեկութեանց, ի մօտոյ այս իմաստով օրինագիծ մը պիտի ներկայացուի հանրային քննութեան:

Նկատի ունենալով, որ Պայաստանի մամուլը մեծ մասամբ ինքզինք դիրքաւորած է իշխանութիւնը պաշտպանողներու ու «ռմբակոծող»-ներու հակադիր խրամատներու մէջ, չենք ուզեր «հալած խղի» պէս կուլ տալ նման տեղեկութիւն, այլ կը սպասենք, որ նոյնիսնք կառավարութիւնը հերքում եւ յստակացում տայ հարցին: Փաստօրէն, նման դասաւորում, կը կարծենք, նախարարութեան մը տնօրինումով վճռուելիք հարց չէ, այլ մաս կը կազմէ, պէ'տք է մաս կազմէ կառավարութեան ընդհանուր ուղղութեան, շատ աւելի լուրջ պարագայ է, քան ինչ որ պատահական լուր: Նման հաւանական տնօրինումի մը անհեթեթութեան կամ վնասակարութեան մասին երկար խօսիլը անհրաժեշտ չէ:

Չենք ուզեր դէպքերէն յառաջ անցնիլ ու Նետուիլ մէկնաբանութիւններու եւ հակաճառութիւններու ոլորապտոյտին մէջ, որոնք իրերայաջորդ ւալիքներով կ'ողողեն գանգուածային լրատուամիջոցները:

Կը սպասենք:

Ս. Մ.

17 հոկտեմբեր 2019

ԱՌՆՕ, ԲԱՅՑ ՈՉ ԲԱԲԱԶԱՆԵԱՆ ԿԱՄ ԳՆԴԱԿԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ



Փոքրիկ Աննոն (Աննօ Տէր Պողոսեան) դեռ 1 տարեկան 9 ամսական է եւ արդէն գիտէ 170 երկրի դրօշ՝ առկայ 195-էն, աշխարհի 50 տարբեր հրաշալիքներ, 20 հայ եւ այլ աշխարհառչակ յօրինողներ. իւրաքանչիւր յօրինողէ մէկ կամ քանի մը ստեղծագործութիւն կը կռահէ ընդամենը քանի մը նօթայէն: Փոքրիկ Աննոն անընդհան կ'աւելացնէ իր իմացութիւնը, կ'ուսումնասիրէ՝ թիւեր, անատուններ, թռչուններ, մասնագիտութիւններ, փոխադրամիջոցներու տեսակներ, գործիքներ, հագուստ, մարմնի մասեր եւ այլն:

Փոքրիկը հազիւ կրնայ խօսիլ, բայց կ'առանձնանայ՝ անընդհատ նոր գիտելիք ձեռք բերելու իւրովի ցանկութեամբ:

«Ամէն ինչ սկսաւ գնդակի մը պատմութենէն... Աննոյին խաղալիքներու ընտրութիւնը ինձի համար միշտ ալ շատ կարեւոր խնդիր եղած է: 1 տարեկան 5 ամսական էր, երբ առաջին անգամ անոր համար գնդակ գնեցի, որուն վրայ դրօշներ պատկերուած էին (շուրջ 30 դրօշ). եւ բաւական կարճ ժամանակահատուածի մէջ ան գիտէր արդէն բոլորը: Աւելի զարմացայ, երբ սկսաւք ուսումնասիրել հայ եւ այլ աշխարհառչակ յօրինողները ու լսել անոնց ստեղծագործութիւնները. ան կրնայ ճանչնալ ոչ միայն յօրինողները իրենց նկարներով, այլեւ իւրաքանչիւր յօրինողի մէկ ստեղծագործութիւն՝ ընդամենը քանի մը նօթայէն: Ինձի յաճախ կ'ըսեն, որ տաղանդաւոր բալիկ ունիմ, մինչդեռ ես կը կարծեմ, որ բոլոր բալիկներն ալ տաղանդաւոր են, ուղղակի պէտք է բացայայտել այդ տաղանդը եւ անոնց թելեր տալ՝ թռչելու», ըսած է Ռուզաննան, փոքրիկ Աննոյի մայրը:



ԱՖՀԻԼ
Since 1998
ARMENIAN MUTUAL FUND

20 Years of Commitment

"The BEST WAY to Find Yourself is to LOSE YOURSELF in the Service of Others"

Mahatma Gandhi



Health Insurance



Travel Insurance



GoodCare Clinic



Car Insurance



Health Clubs



Home Medical Equipment



BOB - Western Union



University and Student Fund



«ՅՈՒՑ» Health Magazine

www.afhil.com |
 AFHIL Mutual Fund
 Bourj Hammoud, Arin Center, 4th Floor |
 Tel. 01 242 556/7

ՔՐԻՍՏԱՓՈՐԻ ՅԱՐԱՏԵՒ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆԸ



Գողթն գաւառը: Յայրութեան ըմբօստ ոգիի խանձարուրը: Յայ քաջերու օրրանը: Յոն, վերին Ագուլիս գիւղին մէջ, 160 տարի առաջ, 18 հոկտեմբեր 1859-ին, ծնաւ հայ մը, որուն վիճակուեցաւ յեղաշրջել դարերով հալածուած հայ ժողովուրդին կամքն ու վճռականութիւնը: Երբ վեց դարեր Գողթնի քնարները լռած էին, մեր հին երգը կը լսուէր տակաւին. «Երկնից թող գան անմահ հոգիք, հայոց քաջեր պսակել»: Անմահ հոգիները Գողթնի քնարներով պսակեցին հայ քաջ մը, որ վառեց Յայկական յեղափոխութեան կրակը՝ յանուն հայրենիքի ազատութեան:

Այդ քաջն էր՝ Քրիստափոր Միքայէլեան:

Քրիստափոր եղաւ հայ մարդը խիզախեցնող մարդակերտը: Ան եղաւ հայ մարդը յանդնեցնող յեղափոխականակերտը: Ան եղաւ Յայկական յեղափոխութեան ոգին, կամքը եւ միտքը: Ան դարձեց կռիւին յարատեւութիւնը, որպէսզի ազատագրուի հայկական լեռնաշխարհը: Ան պատռեց հայութիւնը բաժանող քարտէսները, որպէսզի ամբողջացուի հայրենիքը եւ միացուի հայութիւնը: Ան պատռեց. «Պատռել է հարկաւոր քարտէսների վրայ այս կամ այն աւագա-կապետի կամքով գծուած սահմանները, քնշել է հարկաւոր այն աշխարհագրական ներկերը, որոնք մեզ բաժանում են իրարից եւ որոնք առհասարակ մշտական չեն, իսկ երբեմն շատ կարճատեւ են լինում»:

Ան ճգնեցաւ պատրաստել մեր ժողովուրդը յեղափոխական վճռականութեամբ եւ քաղաքական տրամաբանութեամբ, երբ քաղաքական ստաիակներ ճիգ չէին ինայեր ժողովուրդին առողջ միտքը ապականելու ամբոխային տրամաբանութեամբ:

Ամբոխային տրամաբանութեան վարպետները կը մեղադրէին մեր ազատագրական պայքարը իբրեւ պատճառ՝ հայութեան դէմ սուլթանական կոտորածներուն: Անոնց կը պակսէր քաղաքական տրամաբանութիւնը տեսնելու, թէ կոտորածները երկար ժամանակէ կը գործադուէին, երբ տակաւին չկար հայկական ազատագրական պայքարը: Յետեւաբար ու պարզօրէն, կոտորածները հիմնական պատճառն էին հայկական յեղափոխութեան եւ ոչ թէ հակառակը:

Այսօր ես կը շարունակե քաղաքական տրամաբանութեան բախումը ամբոխային տրամաբանութեան դէմ:

Այսօր, ամբոխային տրամաբանութեան նոր վարպետները կը մեղադրեն մեր ազգային առաքնութիւնները - մեր արժէքները, հայրենասիրութիւնը, հայութիւնն ու Պայաստանը ամէն բանէ վեր դասելու յանձնառութիւնը - իբրեւ հիմնական պատճառ մեր ներկայ կացութեան: Բայց մեր ներկայ կացութիւնը եւ անոր վատթարացող ընթացքը սկսաւ այն պահուն, երբ ամբոխային տրամաբանութեան վարպետները սակարկութեան դրին մեր ազգային առաքնութիւնները: Եւ այդ սկսաւ 1921-ին պոլշեփկեան բռնադիտութեամբ ու կը շարունակուի վերանկախացած հայրենիքի մեհատիրութեամբ ախտաւորուած յաջորդական իշխանաւորներով:

Ինչպէս անցեալին, այսօր ես ամբոխային տրամաբանութեան վարպետները այդ միեւնոյն քաղաքական ստահկներն են, որոնց պատուէրները կը ներածուին օտարածին աղբիւրներէ:

Քրիստափոր լաւապէս ճանչցած էր այս ստահկներու տեսակը՝ ըլլան անոնք անցեալէն եկող թէ ներկայէն բնոյթ: Արարքի մը, դէպքի մը, երեւոյթի մը, կամ կացութեան մը գոյութիւնն ու զարգացումը ունին հիմնական պատճառներ: Այս ըմբռնումն է որ մեզի կը պարտադրէ Քրիստափորեան քաղաքական տրամաբանութիւնը: Ամբոխային տրամաբանութիւնը պարզապէս կ'ապախիկի անցողակի «առիթներու» եւ «պատրուակներու»՝ ծածկելու համար այդ տրամաբանութիւնը մեր ժողովուրդին մէջ սրկող ստահկներուն վարձկանութիւնը:

Քրիստափորի քաղաքական տրամաբանութեան մէկնակետը յստակ է.

«1- Երբ կան հիմնական պատճառներ որեւէ երեւոյթի առաջ գալու համար- առանց ակներե «առիթի» էլ երեւոյթը զարգանում է:

2- Երբ չկան հիմնական պատճառներ -

նոյնիսկ խոշոր դէպքերն էլ «առիթի» նշանակութիւն չեն ստանում:

3- Երբ կան հիմնական պատճառներ - հարկաւոր դէպքում «առիթ» կամ «պատըր-ակ» երբեք չի պակասիր:

4- Երբ կան հիմնական պատճառներ - դրանց դէմ կռուող բոլոր միջոցները ոչ միայն վնասակար չեն կարող լինել, այլեւ միանգամայն անհրաժեշտ հակակշիռ պիտի համարուեն»:

Յետեւաբար, պէտք է կատարել ճիշդ ընտրութիւնը քաղաքական տրամաբանութեան եւ ամբոխային տրամաբանութեան միջեւ: Երկրորդը օտարածին աղբիւրներէ ջուր խմող քաղաքական ստահակներուն կը պատկանի: Առաջինը մեր ազգային առաքնութիւններուն պատանախանն է:

Քրիստափորի համար ամբոխային տրամաբանութեան վերացումը պարտադրանքն է մեր ազգային իրավիճակին: Յետեւաբար, պէտք է ազգովին ուշադիր ըլլալ, որովհետեւ.

«Եթէ մարդիկ ուզում են ձեզ հաւատացնել՝ թէ իրենք «ուրիշ համոզումներն են դաւանում» այն ժամանակ, երբ ոչինչ չեն անում ոչ մի տեսակ համոզմունքների համաձայն կամ յանուն «գերագոյն շահեր» միայն թունաւորում են հասարակական կարծիքը եւ կամ օր ու գիշեր օդը յանուն բանուորական «յաւելեալ աշխատանքի», բայց մնում են ստոյիկեան սառնասիրտներ մի ամբողջ ժողովրդի «յաւելեալ արեան» դիմաց»:

Քրիստափոր գործեց իր պատգամին համաձայն: Իր խօսքը զուգորդեց գործին՝ իր անձին օրինակով: Մեր ազատագրական պայքարը վճռական հանգրուանի հասցնելու նպատակով, 1904-ի ՅՅԴ-ի 3-րդ Անդիա-Նուր ժողովին Քրիստափոր առաջադրեց Սուլթան Ապտիւր Յամիտի վերացումը: Ժողովը որոշեց: Ան նաեւ պահանջեց անձնապէս գործադրել ծրագիրը: Ժողովը ընդառաջեց: Այսպէս էր ու է՝ Պաշնակցութիւնը: Անոր առաջնորդները թէ՛ ղեկավարներ են, եւ թէ՛ պարզ զինուորներ:

Քրիստափոր չէր կրնար բացառութիւն ըլլալ, իսկ Պաշնակցութիւնը չէր կրնար բացառութիւն ընել Քրիստափորին, հոգ չէ թէ ան գլխադիր առաջնորդն էր կուսակցութեան: Քրիստափորը նաեւ յեղափոխական զինուորն էր: Նոյնիսկ իբրեւ առաջնորդ, ան պատրաստ էր կատարելու գերագոյն գոհաբերումը՝ Պայաստանի համար, հայութեան համար:

Սուլթանի սպանութեան ծրագիրին համաձայն, ան լծուեցաւ գործածուելիք ռումբի պատրաստութեան՝ Պուկարիոյ Վիտոլ լեռան շրջանին մէջ: Ռումբի փորձի մէկ ըզբախտ պահիւն՝ պայթիւնէ նահապետեցան 46-ամեայ Քրիստափոր եւ իր ընկերակիցը՝ Վառշապուոն ԷՔետիրեան:

Իր գործով եւ օրինակով Քրիստափոր մեր ժողովուրդին կտակեց ազգային ազատագրական պայքարի գերագոյն գոհաբերութեան յեղափոխական անաւոր, որուն կարգած կը մնայ մեր ժողովուրդը սերունդ առ սերունդ՝ մինչեւ մեր հայրենական հողերու ամբողջական եւ վերջնական ազատագրումը:

Այս անաւոր մենք կը պարտինք Քրիստափորի յարակաւ ներկայութեան, որ պիտի շարունակէ մեր բոլորին յուշել.

«Յարատեւ կռիւ,- ահա թէ ուր է մեր փրկութեան բանալին... չէղուեցք այդ միակ ճանապարհից, որ սփռուած է յուսատու ապագայի գրաւիչ ծաղիկներով...», որովհետեւ «քնշել է հարկաւոր այն աշխարհագրական ներկերը, որոնք մեզ բաժանում են իրարից, եւ որոնք առհասարակ մշտական չեն, իսկ երբեմն շատ կարճատեւ են լինում»:

Գողթնի քնարները ալ չեն լռած: Անմահ հոգիները միշտ պիտի իջնեն վար՝ օծելու համար հայ քաջերը Վարդանանցն մինչեւ Պանք Օթոման, Սարդարապատ, Լիզպոն եւ Արցախ...:

Գողթնի քնարները պիտի չլռեն, որովհետեւ Քրիստափորի ներկայութիւնը յարատեւ է:

ՄԵՐՈ ՊՈՅԱՃԵԱՆ

Լուս Անճելոս

150-ԱՄԵԱԿ

ԼԵՒՈՆ ՇԱՆԹ. ԳՐՈՂԸ, ՄԱՆԿԱՎԱՐԺԸ, ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐԴԸ ԵՒ ՓԻԼԻՍՈՓԱՆ

Կոմիտաս վարդապետի եւ Յովհաննես Թումանեանի տարեկից Է Լեւոն Շանթ, անոր կեանքի ճանապարհները յաճախ զինք բերած-դրած են այդ երկու հանճարներուն ու ժամանակակից այլ մեծերու հետ սերտ յարաբերութեան ու գործակցութեան մէջ, եղած է մեր արեւելահայ եւ արեւմտահայ կեանքերն ու միտքերը կամրջող-մարմաւորողներէն, որովհետեւ կեանքը հաւասարապէս բաժնըւած է մեր ժողովուրդի երկու հատուածներուն միջեւ, դարձած է յետ-ցեղասպանութեան սփիւռքը հունաւորողներէն, սակայն անոր անունը առաւելաբար կապուած է հայկական թատրոնի, վեպի եւ մանկավարժութեան հետ, ինքզինք կերտած ու դրսեւորած է իբրեւ փիլիսոփայ, իր գրականութիւնն ու կենցաղն ալ եղած են ցոլացու մը իր փիլիսոփայի նկարագիրին ու խորաթափանց մտածողութեան:

Պոլիս ծնած, Էջմիածին ուսանած, եւրոպական երկիրներու մէջ շրջագայած, Կովկասի ու անկախ Հայաստանի մէջ ազգային գործունեութեամբ վաստակ կերտած այս մտաւորականը յառաջացեալ տարիքին իր կեանքը կնքած է Պէյրութի մէջ, 1951-ին, մինչեւ վերջին շունչը նուիրուելով իր հիմնադրած ու սիրած Ճեմարանին, սաներուն ու ժառանգորդներուն: Անոր գրական վաստակը կը լեցնէ բազմահատոր շարք մը, իսկ բազմաթիւ հատորներ ալ կրնան արձանագրուիլ իր արժանիքներուն մասին. ուրախալի է, որ Շանթի գրական ու մտաւորական վաստակը հետզհետէ աւելի լայն ուսումնասիրութիւններու նիւթ կը դառնայ, ծննդեան 150-ամեակը, ինչպէս՝ Կոմիտասի ու Թումանեանի պարագային, համազգային տարածքով վեր կ'առնուի գիտաժողովներու եւ այլ նախաձեռնութիւններու ճամբով, թէեւ այս կալուածը վաղուց պեղողներ ալ եղած են:

ԹԱՓԱՆԱԿԱՆ ԿԵՆՔԸ ՄԸ

Լեւոն Շանթի ընտանիքը սկզբնապէս կոչուած է Նահաշպետեան, յետոյ, իր հօր՝ Սեդրոսի անունով, ընտանիքը դարձած է Սեդրոսեան: Հայրը կանուխ հեռացած է աշխարհէն, իսկ մանուկ Լեւոնը, ծննդավայր Պոլսոյ մէջ նախնական ուսումէ ետք, իբրեւ ընդունակ աշակերտ՝ առաքուած է Էջմիածինի Ճեմարանը, երբ հազիւ 12 տարեկան էր. գրեթէ նոյն տարիներուն Կուսիկայէն եկած էր նաեւ Սողոմոն Սողոմոնեանը՝ ապագայի Կոմիտասը, որուն հետ Շանթի բարեկամութիւնը սկիզբ կ'առնէ այդ օրերէն:

19-րդ դարու վերջին տարիներն ու յաջորդող տասնամեակը տաք տարիներ էին թե՛ ազգային եւ թե՛ ռուսական ու թրքական գործօններուն պատճառով. հայութիւնը իր ալիքներուն մէջ առած յեղափոխական մթնոլորտը հասած էր նաեւ Ճեմարան՝ ըմբոստացումի շարժումներով վարակելով նաեւ աշակերտութիւնը: Շարք մը ճակատագրակիցներու նման՝ չէ կրցած աւարտել դասընթացքը ու վկայուիլ Ճեմարանէն:

Պատանութիւնը հազիւ ետին թողած՝ կ'անցնի Եւրոպա, առաջին հերթին կը հետեւի հաշուակալութեան դասընթացքներու, կը վերադառնայ Կովկաս, կը դառնայ հիւպատոսական դպրոցի աշակերտ, յետոյ դարձեալ Եւրոպա է՝ Պէճիքի ու Փարիզ. Փիժիէի համալսարանէն կը վկայուի իբրեւ հաշուապահ. սա կ'ըլլայ իր ստա-



ցած միակ համալսարանական վկայականը: Աւելի ուշ, երբ Պոլիսէն դարձեալ կ'անցնի Եւրոպա, ուսումը կը շարունակէ իբրեւ ազատ ունկնդիր:

Միակ վկայականը ստանալէն ետք կը դառնայ Պոլիս ու կը մտնէ կեանքի ապարդէ, կ'ըլլայ հաշուապահ, նաեւ ուսուցիչ՝ Ռոտոսթոյի մէջ: Այս հանգրուանին է, որ մուտք կը գործէ գրականութեան անդաստանը՝ հրապարակ գալով «Մաք բարովի իրիկունը» գործով, որ անմիջապէս կը դառնայ հետաքրքրութեան առարկայ: Երկար չի մնար Պոլիս, այլ ուսանողական կեանքը զինք դարձեալ կը տանի Եւրոպա, կը վերադարձնէ Կովկաս, ուր Թիֆլիսը հայ մշակոյթի ու մտաւորականութեան «արեւելեան մայրաքաղաք»-ն էր. մինչեւ Ցեղասպանութեան նախօրեակը՝ անոր կեանքը անվերջաւալի երթեւեկ մըն է Կովկասի, Պոլսոյ ու եւրոպական ոստաններու միջեւ: Լայփցիկի ու Միւնիխի մէջ կը հետեւի փիլիսոփայութեան, հոգեբանութեան ու թատերական ուսումի. աւելի ուշ, Ցեղասպանութիւնը կանխած տարիներուն, ան դարձեալ կ'երթեւեկէ Թիֆլիսի, Երեւանի, Փարիզի, Լոզանի ու ժընեւի միջեւ՝ առանց մոռնալու ծննդավայր Պոլիսը: Չուիցերիոյ մէջ է, որ կը ծանօթանայ իր ապագայ կնոջ: Անոր մէջ հետզհետէ կը կազմաւորուի մանկավարժի, գերմանական ականաւոր փիլիսոփաներու հետ հաղորդ դառնալու, թատրոնի հանդէպ սիրոյ եւ զգացումներէն վեր թռչող եւ միտքի տիրապետութեան յարող գրողի յատկութիւնները, առանց անտեսելու ազգային կեանքի մարտահրաւերները: Թիֆլիսի մէջ «կ'անդամակցի» Թումանեանի «Վերնատուն»-ին, իր պատուանդանը կը կերտէ իրերայաջորդ վեպերով ու թատերական գործերով՝ հաւասարապէս գրաւելով արեւելահայ ու արեւմտահայ մտաւորականներու ուշադրութիւնն ու բարեկամութիւնը: Դեպի Եւրոպա իր ճամբորդութիւնները այլապէս բախտորոշ չ'ըլլան, որովհետեւ այդպիսով կը փրկուի Ցեղասպանութենէն:

1912-ին ծնունդ առած «Հին աստուածներ»-ը Շանթը կը կնքէ



իբրեւ տիրական ու նորարար թատերագիր. գործը կը ներկայացուի Պոլսոյ եւ Թիֆլիսի մէջ, կը գտնէ լայն ընդունելութիւն: Կ'արժէ փոքր փակագիծ մը բանալ՝ անդրադառնալու համար այս գործին արարման պայմաններուն: Նիւթը վաղուց կազմաւորուած էր Շանթի մէջ. օր մը կը հիւսնադասալ եւ ստիպուած կ'ըլլայ քանի մը շաբաթ բացակայիլ դպրոցէն, ուր ուսուցիչ էր: Երբ ապաքինումի օրերը կը հասնին, իր առողջական վիճակին հետեւող բարեկամ բժիշկը կը նկատէ, որ ան տխուր էր. կը հարցնէ պատճառը՝ զարմանալով, որ ապաքինող մը ինչո՞ւ պէտք է տխուր ըլլայ: Շանթ կը հանէ թղթածրար մը եւ կը յանձնէ բժիշկին. «Հին աստուածներ»-ուն ձեռագիրն էր, որ թուղթին յանձնուած էր հիւանդութեան օրերուն, բայց տաւալին չէր աւարտած: Բժիշկը կարդալէ ետք գործը կը վճռէ, որ Շանթ տակաւին հիւանդ է ու քանի մը օր ես պէտք է անկողնի մնայ՝ կատարելապէս ապաքինելու համար...

Յաջորդ տարիներուն Լեւոն Շանթ առաւելաբար Կովկասի մէջ է: Ա. Աշխարհամարտի տարիներուն ու Հայաստանի անկախութեան շրջանին զինք կը տեսնենք ազգային գործիչի ու պետական մարդու պատմութեանով, դերակատարութիւն մը, որ կը կատարէ բծախնդրութեամբ ու յանձնառութեամբ: Անկախութեան տարիներուն, շրջան մը կը վարէ խորհրդարանի նախագահի պաշտօնը, աւելի ուշ դիւանագիտական աշխատանքը զինք կը տանի Մոսկուա, ուր իբրեւ հանրապետութեան պատուիրակութեան պետը՝ պէտք էր բանակցէր ամէն գնով Հայաստանին տիրել ու անկախութեան վրայ տապալանաբար դնել վճռած Մոսկուայի համայնավար վարիչներուն հետ. Շանթի պատուիրակութեան առաքելութիւնը ապարդիւն կը մնայ իր կամքէն ու ցակութիւններէն անկախ պատճառներով: Զեռնուելայն կը վերադառնայ Հայաստան, ուր համայնավարներու իշխանութեան հասնելէն ետք կ'ըլլայ բաւական նետուող դաշնակցականներէն: Փետրուարեան ապստամբութիւնը առիթ կ'ըլլայ, որ բազմաթիւ ճակատագրակիցներու հետ փրկուի, մինչ այլ մտաւորականներ ու ֆետայապետներ զոհ կը դառնան «կարմիրներու» կարմիր գործին:

Այնուհետեւ կը բացուի Շանթի թափառական կեանքին վերջին, բայց նուազ շարժունակ փուլը: Անկախութեան կորուստէն ետք գաղափարակից-գործակիցներու հետ կ'անցնի Պարսկաստան, ապա՝ Ֆրանսա. 20-ականներու երկրորդ կիսուն Եգիպտոս է, որ այդ օրերուն դարձած է սփիւռքեան մեր գլխաւոր կեդրոններէն մէկը. հոն խմբուած էին հանրապետութեան կերտիչներէն որոշ թիւ մը, ինչպէս նաեւ՝ տարբեր կուսակցութիւններէ գործիչներ: Հայրենի հողէն ու պետական յենարանէն զրկուած՝ Շանթ ու գաղափարակիցները՝ տեսիլք ունեցող ամբողջ սերունդ մը, քաջածանօթ էին Հայ Մշակոյթի կենարար դերին ու նոր սերունդներուն համար ապահով պարիսպ ըլլալու դերին: Արդիւնքը կ'ըլլայ Համագալին կրթական եւ մշակութային ընկերակցութեան (շուրջ կէս դար ետք՝ միութիւն) հիմնադրութիւնը. շուտով մարմին կը ստանայ Պէյրութի Ճեմարանը, որուն կողքին կը հաստատուի տպարան-հրատարակչատունը, եւ անկէ լոյս կը տեսնեն լեզուի, պատմութեան դասագիրքեր եւ մանկական գիրքեր, շուտով նաեւ՝ գեղարուեստական եւ յուշագրական գրականութիւն: Ճեմարանը կը դառնայ անոր ու գործակիցներուն գոյութեան նպատակը. 30-ականներէն սկսեալ, մինչեւ մահը, կը վարէ ուսումնարանին տնօրէնութիւնը՝ կատարելապէս կիրարկելով արդի մանկավարժի իր գործը, կը պատրաստէ մանկավարժներ ու ազգային գործիչներ, որոնք անխառն հիացումով կը յիշեն իրենց ուսուցիչն ու հետագայի բարեկամը: Վերջին տարիներուն անբուժելի հիւանդութիւն մը զինք կը հիւծէ աստիճանաբար, սակայն անոր մէջ անմար կը մնայ փայլուն միտքն ու փիլիսոփայ մարդը:

Լեւոն Շանթ մարդուն ուրուագիծը փակելէ առաջ լշէնք, որ ան իր բարեկամներուն, գործակիցներուն եւ աշակերտներուն աջքին միշտ ալ եղած է «կոճկուած մարդ», որ գործած է ու յարաբերած՝ թուաբանական ճշգրտութեամբ. միայն հիւանդութեան անկողինին մէջ է, որ մարդիկ զինք տեսած են գիշերազգեստով. այլապէս, ան միշտ տեսնուած է փողկապով, կոկիկ հագուած ու բծախնդրութիւն բուրրող տեսքով: Աներեւոյթ պատուար մը բաժնած է զինք՝ շրջապատէն. Նիկոլ Աղբալեան եղած է հազուադէպ մտերիմներէ՝ զարմանք պատճառելով գործակիցներու եւ սերնդակիցներու, որովհետեւ անոնք տարբեր խմորումով անհատներ էին:

«ԴՅՈՒՐ ՄԱՅՁԵՆԻ ԳՐՈՂ»-Ը

Շանթէն հայ գրականութեան կը մնայ վեպերու, թատերական գործերու, բանաստեղծութիւններու, մանկավարժական գրականութեան ստուար ժառանգութիւն մը, որ դժբախտաբար կը մնայ «դժուար մատչելի գրող»-ի անարդար կնիքին տակ. նման՝ հայ թէ օտար շարք մը գրողներու, որոնք անցեալին թէ այսօր ընթերցողէն կը պահանջեն կարդալ՝ միտքին գերադասութիւն ընծայելով: Իրմէ

առաջ, օրինակի համար, Ինտրա մը շահած է այդ համբաւը, ժամանակակիցներէն Յակոբ Օշականը կը համարուէր «դժուար մատչելի գրող», այսօր ալ ունինք հանճարեղ ու շնորհալի գրողներ, օրինակի համար՝ Գ. Պլլըտեանը, որոնց անուան դիմաց հապճեպօրէն ու աժան կերպով կը փակցնենք «դժուար հասկնալի» պիտակը: Մինչդեռ ընթերցողին կողմէ նուազագոյն ճիգ մը ու գրողին աշխարհին հաղորդակից ըլլալու պատրաստակամութիւն մը անմիջապէս պիտի քանդէ ամէնէն բարձր նկատուած պատնէշը եւ արւեստի գործօնը պիտի հասցնէ զմայլանքի, բայց նաեւ՝ մտածելու ու համակուելու ոլորտին:

Շանթի վիպական ու թատերական հերոսները կարելի չէ դիւրութեամբ բաժնել առաջնակարգ ու երկրորդական դասակարգի տիպարներու, որովհետեւ անոնցմէ իւրաքանչիւրը, մինչեւ իսկ ամենէն փոքր բաժինը ունեցող կերպար մը կը ցոլացնէ Շանթի մտածումներուն ու մարդկօրէն կատարելագոյնին ձգտելու ձգտումը, տենչանքը, մղումը: Անոր հերոսները զգալիօրէն տարբեր են «հասարակութիւն» կոչուած մարդ Էակներէն, այլ կը մարմնաւորեն՝ ազնուութիւն, վեհ զգացումներ, լաւագոյնը կերտելու եւ բարձրագոյնին հասնելու ձգտում: Անոնք պարզ կիներ ու այրեր չեն, այլ Շանթ անոնց մէջ կը փնտռէ ու կը տեղադրէ գլխագիր Մարդը, գլխագիր Կինը, որ պատրաստ է բարձրանալու կիրքերէ, նենգութենէ, դաւադրութիւններէ եւ այլ ախտերէ վեր՝ ստեղծելու համար վերացնող միջավայր մը, ընկերութիւն մը: Շանթի մտածումներու աշխարհին մէջ երբեմն կը տեսնուի Նիցշէի մը կամ ժամանակակից այլ գերման փիլիսոփաներու մտածողութեան ազդեցութիւնը, սակայն Շանթի որոնած մարդը համանման չէ Նիցշէի «գերմարդ»-ուն: Ան կը հաւատայ, որ մարդ արարածը ունի կարողութիւնը ինքնագոյնի, մարդկային ախտերէ եւ ունայնութիւններէ ձերբազատելու եւ ինքզինք բարձրացնելու մարդէն դեպի Մարդը, թէեւ անոր տիպարները երբեմն լիովին կարող չեն դուրս գալու նման զգացումներու պատանդի վիճակէն: Այս գիծը առաւելաբար ի յայտ կու գայ անոր վեպերուն մէջ, ինչպէս՝ «Կինը», իսկ «Հոգիները ծարաւի»-ն կարծեք թէ ըլլար խտացումը եւ բարձրակետը իր բոլոր վեպերուն:

Շանթ նաեւ խոր հաւատացող մըն է ընկերութեան անդամներուն միջեւ հաւասարութեան, գլխագիր ընկերվարական մը՝ հեռու խեղաթիւրեալ մեկնաբանութիւններէ: Այսպիսի մտածողութեամբ օժտուած ու կազմաւորուած հեղինակը ինքնէկ մղումով ունի արտայայտուելու վերամբարձ, բայց ոչ անհասկնալի ու անմատչելի ոճով:

Իր ուսումնառութեան ազդեցութիւնը, բայց մանաւանդ հաւաքական կեանքի փորձառութիւնը զինք հասցուցած են այնպիսի իրապաշտութեան մը, որ ակնեւե կերպով համակուած է յոռետեսութեամբ: Եթէ դարեր առաջ կեանքի բոլոր վայելքները ըմբռնուած Սողոմոն իմաստուն մը յայտարարած էր որ կեանքը «ունայ-



նութիւն ունայնութեան» է, իսկ աւելի ուշ, ստոյիկ փիլիսոփայութիւնը մարդը հրաւիրած է տարբեր իրապաշտութեան մը, որ ընդէլուտեղ է որոշ խտելապաշտութեամբ, հայրութեան կեանքի դառն բաժակէն ըմպած Շանթ նմանօրինակ իմաստութիւն մը բիրտեղացուցած է իր վիպական ու թատերական հերոսներուն ճամբով: Աշխատանքի ախոյեան մըն է, սակայն նաեւ ունի այն համոզումը, որ մարդ իր բոլոր ըրածներով միայն ժամանակը լեցնելու կ'աշխատի, ինքնախաբերութեան տարբեր ձեւեր կը փնտռէ, որովհետեւ «կեանքը ունայնութեան փոս մըն է», պէտք է զայն լեցնել այս կամ այն ձեւով, իսկ երբ լեցուած է, դարձեալ պարպել ու վերսկսիլ լեցնել: Ուրիշ տեղ հերոս մը կը փորձէ «կեանքի փոս»-ը լեցնել եկեղեցի մը շինելով, սակայն երբ շինարարութիւնը կը մօտենայ աւարտին, կ'որոշէ քանդել զայն ու վերստին շինել, անընդհատ քանդել ու վերստին ձեռնարկել շինելու, այնպէս մը, որ երբեք չաւարտի. որովհետեւ աւարտէն ետք, կը դարդի տաճար մը ըլլալէ, ի յայտ պիտի գայ Պարապութիւնը: Շանթ գիտէ նաեւ, որ մարդկային հոգին «մուչ տեղ մըն է», ուր կը սողոսկին ստորնացնող կիրքեր ու զգացումներ, մտածումներ, հետեւաբար անոր իւրաքանչիւր գործը բեմ մըն է՝ պեղելու մարդկային հոգիին տարբեր վիճերը, եւ հրաւեր՝ ձերբազատելու մարդը Մարդէն խտորող գործօններէն: Այս առումով ալ անոր իրապաշտութիւնը գերծ չէ խտելապաշտութենէ:

Իր օրերուն Շանթ նկատուած է յառաջապահ, ժամանակէն առաջ ծնած թատերագիր, որովհետեւ անոր կարգ մը գործերը դժուար բեմադրելի են, օրինակ՝ «Շղթայաւածը» կամ «Հին աստուածներ»-ը, ուր կան փոթորկալայրգ ծովու եւ պատռուող յատակի-խորքի տեսարաններ: Արդի արհեստագիտութիւնը կրնայ դիւրու-



թեամբ լուծել նման դժուարություններ, մանաւանդ եթէ փորձ ըլլայ զանոնք ժապաւենի վերածելու, եւ սա ազնիւ մարտահրաւերի մը դիմաց կը դնէ Եօթներորդ արուեստի աշխարհին ծառայող մեր արուեստագետները, որոնք վերջին տասնամեակներուն առաւելաբար տարուած են «աղբային» գործեր հրամցնելով: Տակաւին, անոր գործերուն մէջ կայ անմիջական արձագանգն ու արդար մեկ-նաբանութիւնը՝ իրեն ժամանակակից աշխարհի գաղափարական հարցերուն. «Շղթայուածը» անժամանցելի թատրոն է, որ եթէ անմիջականօրէն կը դատապարտէ համայնավարութիւնը (ինչպէս որ ճորճ Օրուէլ մը աւելի քան երկու տասնամեակ ետք պիտի ըներ իր հոչակաւոր «1984» վէպով), անկիկ կը դատապարտէ ամէն տեսակի բռնատիրութիւն, ո՛վ որ ալ ըլլայ զայն կիրարկողը՝ օտար տիրապետող մը, հայ իշխան մը թէ ժողովուրդին անուետվ իօսող՝ դէկավարի դիրքին հասած աշխատաւոր մը կամ այլ ներկայացուցիչ մը, որովհետեւ հրաւեր է ձերբազատելու ներքին բռնաւորէն:

Այս արժանիքներով օժտուած մտաւորականը իր հաստալիքներուն համապատասխան սարած է ամբողջ կեանքը, նոյն տրամադրութեամբ եւ ազնուանալու թեւդրանքով դաստիարակած է ամբողջ սերունդներ. անոր դաստիարակի «մանր գործերէն» կարելի է սեպել լեզուի դասագիրքները, որոնք ատենին իբրեւ արդիական «գործիք» օգտագործուած են մեր վարժարաններուն մէջ:

Այս բոլորը նկատի ունենալով՝ պէտք է տեսնել, թէ ինչպիսի՞ անարդարութիւն ըրած կ'ըլլանք, եթէ Շանթը շարունակենք նկատել «անմատչելի, դժուար հասկնալի գրող»:

Չանտեսենք նաեւ այլ չարախօսութիւն մը, որ պատճառ դարձած է Լեւոն Շանթի հանդէպ վերապահութիւններու գոյառման: Շանթի կեանքը, ուսումնառութիւնն ու փորձառութիւնները զինք կանուխէն հեռու կանգնեցուցած են կրօնական աշխարհէն եւ ճանցուցած են իբրեւ անաստուած: Շանթ աստուածապաշտ մը չէ արարողական, ու այդ ճամբով՝ միտքի սահմանափակում ընդունողի իմաստով. կրօն հասկացողութիւնը առաջին ու վերջին հերթին ՅԱՄՍԵԻ խաղուած է: Շանթի գրականութիւնն ու ժառանգութիւնը չի ցուցներ Յաւատքին մերժում կամ դրժում, այլ կրօնական որոշ տեսակի մտածողութեան մերժում է, մասամբ նաեւ՝ հարազատ մեկ արտայայտութիւնը այն տարածուն մթնոլորտին, որ նախացողասպանութեան տարիներուն ի յայտ եկաւ հայութեան կեանքին մէջ, ժամանակակից բազմաթիւ հանճարեղ գրողներու արտայայտութիւններով: Դանիէլ Վարուժան մը «Յերթնոս երգեր» յօրինեց, Չարդարեան մը բազինին երկրպագու էր, Օշական մը այլապէս որոշ հեռաւորութիւն ուներ կրօնական աւանդական ու յետամնաց մտածողութենէ, իսկ անոնց ժամանակակից բազմաթիւ գեղանկարիչներ իրենց գործերուն մէջ վերադարձ կատարեցին դէպի հայութեան հեռաւոր անցեալի՝ Արա Գեղեցիկի, Արտաւազդի ու նմաններու փառքի ու յաղթանակի օրերը: Ան Սիցչի մը նման չէ յայտարարած, որ «Աստուած մեռած է», այլ, ինչպէս Նշեցինք վերը, անոր փիլիսոփայութեան մէջ կարելի է տեսնել մարդուն ու կնոջ Մարդասիրտի օրաը: Ահա թէ ինչպիսի՞ լայն շրջագիծի մը մէջ պէտք է դիտել Շանթի ու ժամանակակից մեր հեթանոսամետ ու անաստուած հռչակուած գրողներուն ու մտաւորականներուն ձգտումները, ու բնական է, որ նեղմիտ, խաւարամիտ ու պաիպանողական կոերը, ինչ ժամանակաշրջանի մէջ ալ ըլլայ ան, հակամետ պիտի ըլլայ քարոզելու նման մտածողներու դէմ, բանադրանքի պիտի ենթարկէ «Յին աստուածներ»-ն ու գրական այլ ժառանգութիւնները՝ զանոնք հռչակելով «արգիլեալ պտուղ»: Արդեօք քրանչելի հաչատուր Աբովեան մը զոհը չեղա՞ւ նմանօրինակ խաւարամտութեան, որ իր դարուն արտայայտութիւնն գտաւ տարբեր դիմագիծով, երբ գործեց Արարատ լեռը բարձրանալու «սրբապօծութիւն»...

Սօսաւորապէս վեց տասնամեակներու վրայ երկարած հանճարեղ մտաւորականի մը կեանքին ու ժառանգութեան վրայ այս հակիրճ ակնարկը արդարութիւն կ'ընէ՝ անոր վատաւկիւն ու փիլիսոփայական պատգամներուն մասին: Անշո՛ւշտ թէ ոչ: Իսկ եթէ նման ակնարկ պիտի նպաստէ, որ այսօրուան ու վաղուան երիտասարդը ձեռք առնէ Լեւոն Շանթի գրական ժառանգութիւնը, նուազագոյն ճիգը ընէ հաղորդ դառնալու անոր վիպական ու թատերական անգուգական աշխարհին, պիտի տեսնէ, որ հոն կայ բարձրարժէք, միջազգային որեւէ տիտանի հետ մրցող, զայն գերազանցող մտածողութիւն, որ սահմանափակուած չէ որոշ ժամանակի հետ, այլ հեղինակին պապիոված է յաւերժութիւն, կրնայ ընթերցողն ալ դնել յաւերժ ճամբորդութեան մը ուղիին մէջ, զայն վեր բարձրացնելով գծուծ եւ ստորնացնող ազդակներէ, որոնցմով «հարուստ» է մարդկային կեանքը՝ երկ ու այսօր, նման բեռներու տակ կրնայ մնալ նաեւ վաղը:

Ս. ՄԱՅՍԵՐԵՃԵԱՆ

Յունիս 2019

ԲԱՆՈՒԵՐՈՒ ԳԱՆՉԱՐԱՆԻՆ ՄԷՋ - 3

«ԳԱ» ՈՒ «ԹՕ», ԳԵՒ ՈՒ ԹԵՒ, ԳԵՐ ՈՒ ԹԵՐԻ

Ի՞նչ կը կարծեք. մեր լեզուին մէջ «դա»-ո՞վ սկսող բառերը աւելի շատ են, թե՛ «թօ»-ով սկսողները: Այսպիսի հարցում մը ես ինծի ալ չէի հարցուցած մինչեւ այսօր: Սակայն հիմա սկսած եմ հետաքրքրուիլ նմանօրինակ մանրամասնութիւններով: Մալխասեան բառարանը «դ»-ով սկսող բառերը ժողված է 67 էջի մէջ, իսկ «թ»-ին ալ տրամադրած է 63 էջ: Իսկ Սուքիասեանի «**Յոմանիշներու բառարան**»-ը «դ»-ին յատկացուցեր է 36, իսկ «**թ**»-ին՝ 32 էջ: Յետաքրքրական տուեալ մըն է ասիկա: Կը նշանակէ, որ նմանահնչին այս երկու տառերը գրեթէ հաւասար են իրարու դիմաց եւ մօտաւորապէս նոյն թիւով «գինուոր»-ներ կը պահեն իրենց կուռ շարքերուն մէջ...

Ա՛խ, Մաշտոցի այս գինուորները որքա՛ն կը չարչարեն մեզ: Մենք ու մեր զաւակները յաճախ չենք յաջողիլ զատորոշել զանոնք. իրարու հետ կը շփոթենք գինուորներու այս երկու ջոկատները: Անոնք միեւնոյն ձայնով ու միեւնոյն համազգեստով կը ցցուին մեր դիմաց ու շփոթի կը մատեն մեզ: Կ'անճրկինք զանոնք ճանչնալու մեր ճիգին մէջ, հակառակ անոր որ գիտենք, որ «դ»-ի գինուորները առհասարակ աւելի մեղմածայն են ու մեղմաբարոյ, մինչդէռ «թ»-ի համազգեստաւորները թաւածայն են ու աւելի՜ առնական...

«**Դա**» ու «**Թօ**»: Յայերէնի չորրորդ ու իններորդ տառերն են ասոնք: Կարդա՛նք հետեւեալ երկու նախադասութիւնները.
- **Դպրոցին Դ. դասարանի դաստիարակը դասագիրքերու դէգերը դրաւ դռան դիմացի դարաններուն մէջ:**
- **Թագաւորն ու թագուհին թեւանցով թափառեցան թաւուտ թուփերով թերակղզիին վրայ:**

Սփիւռքի տարածքին գործող մեր բազմատասնեակ դպրոցներու հազարաւոր աշակերտներէն քանի՞ հոգի պիտի կարենայ վերի գոյգ նախադասութիւնները գրել ԱՆՍԻԱՆ, առանց ուղղագրական վրէպի: Ես կու տամ ո՛չ մէկ հաւանականութիւն:

Նախադասութիւններէն առաջինին մէջ բացարձակ տիրապետողն է «դա»-ն, իսկ երկրորդին մէջ՝ «թօ»-ն: Յետեւաբար անկարան կարելի է հաստատել, որ երկու բաղածայններն ալ հաւասար տարողութեամբ տեղ ու դեր ունին մեր լեզուին ընդհանուր բառամթերքին մէջ:

Եթէ գրաւոր պիտի արտայայտուինք, այս երկու տառերը ամէն առիթով գլխապտոյտ պատճառող խաղեր կրնան սարքել մեր գլխուն: Արմանքէ զարմանք ու սայթաքումէ սայթաքում կը քշեն-կը տանին մեզ... Այս խաղին մնայուն պարտեալը մի՛շտ մենք կ'ըլլանք, այնքան ատեն որ կատարելապէս չենք տիրապետեր մեր մայրենիին:

Մեր ուղեղն ու աչքը որոշ չափով պէտք է լուսանկարած՝ ըլլան գէթ ամէնէն զործածական եւ լայնօրէն կիրարկելի բառերուն, **մանաւանդ արմատներուն**, արտաքին պատկերները, որպէսզի ինքնավստահ կերպով ու առանց վարանումի բառ մը գրել սկսիք **«դա»**-ով, կամ ընդհակառակն՝ **«թօ»**-ով:

Ելքադրենք, թէ պիտի գրենք ԹԵՒ բառը: Թե՛ւ՝ մարդու մը բազուկը, ուսէն մինչեւ ձեռքին ափը: Կամ՝ թռչուններու եւ միջատներու թւերը: Կամ՝ հազուադէպ մը թւերը: Կամ՝ խաչի մը հորիզոնական երկու թւերը:

Եթէ **«թեւ»** բառին ուղղագրութիւնը իւրացուցինք, ապա ինքնաբերաբար ճիշդ ու անսխալ պիտի գրենայ այն բոլոր բարդ կամ ածանցաւոր միւս բառերն ալ, որոնք կազմուած են միեւնոյն արմատէն: Ճիշդ պիտի գրենք **թեւանցով** (թեւ-թեւի մտած), **թեւազուրկ** կամ **թեւատ** (անթեւ), **թեւաւոր**, **թեւատարած** (թեւերը լայն բացած՝ տարածած), **թեւածել** (թեւերը թափախարել՝ թռչելու համար), **թեւակոխել** (հասնիլ՝ մտնել վիճակի մը կամ փուկի մը մէջ) եւ այլն:

Բայց եթէ սայթաքեցանք ու **«թեւ»**-ը գրեցինք սխալ ուղղագրութեամբ՝ **«դեւ»** ձեւով, այն ատեն... սատանան գրկե՛ց մեզ: Որովհետեւ **ԴԵՒ** կը նշանակէ սատանայ, չար ոգի:


Միշտ ըսած եմ ու հիմա ալ կը կրկնեմ, որ բառերը **շնչաւոր Եակներ** են, եթէ գիտնանք անոնց մօտենալ գուրգուրանքով ու պատասխանատուութեամբ: Բառարանը, որ «չոր» ու անհրապոյր գիրք մը կը նկատուի շատերու կողմէ, անսպասելիորէ գեղեցիկ հորիզոններ կրնայ բանալ մեր առջեւ ու զարմանահիշք խորհուրդներ պարգէլ մեր դիմաց, եթէ երբեմն-երբեմն զլուխ հակենք անոր վրայ, վարպետօրէն քննենք, պեղենք, ստուգաբանենք հոն քնացող բազմահազար բառերուն արմատները, կազմութեան եղանակը, բազմադիմի իմաստները:

Վերը յիշուած սա **«դեւ»** բառը, օրինակ, անակնկալ մը ապրեցուց ինծի: Ես առ այսօր այն համոզուել գոյացուցեր էի, որ **«դեւ»**-ը չար ոգին է, սաղապէլը, մի՛շտ ծխտական իմաստով:

Բառարանս կը յիշեցնէ սակայն, որ **«դեւ»**-ը հրեշտակներու կերպարանքով **չար կամ բարի** ոգին է: Այսինքն անկիւս կրնայ ունենալ նաեւ դրական իմաստ: Եւ թերեւս այ՛ս պատճառով է, որ պարսկահայ մեր յայտնի բանաստեղծներէն մին **«դեւ»** բառը որդեգրած էր իբրեւ իրեն գրչանուն: Բանաստեղծ **Դեւ**: Բուն անունով՝ Մարգար Դարաբեգեան (1901-1976): Իրանահայ քերթողութեան ամէնէն աչքառու անուններէն մին էր Դե՛ւ՝ Արմանտի, Գալուստ Խանենցի, Արամ Գառնեի ու Վարանդի կողքին: Ան նաեւ շնորհալի գեղանկարիչ էր: Նկարչական իր գործերը անպայման կը տպաւորեն մեզ իրենց յստակ գիծերով ու հարազատ գոյներով: Դեւ, 40-ական թուականներէն սկսեալ, երեսուն տարի տեւաբար, տիրապետող անուն մը մնաց Իրանի մէջ՝ մեր գրադարաններուն կտակելով չորս քերթողագիրքեր, երկուքը՝ Թեհրան տպուած, երկուքը՝ Երեւան:

Կրկնեմ, որ **«դեւ»** բառը առաւելաբար կը հասկցուի «սատանայ, հեքիաթներու հիշէ, հեթանոսական աստուած» իմաստով: Արդ, եթէ այս արմատ բառին ուղղագրութիւնը իւրացուցինք, ապա անշեղծօրէն ճիշդ պիտի գրենք անկէ թխող բոլոր միւս բառերը. **դիւային** (սատանայական), **դիւահար** (դեւի մը կողմէ հարուածուած, ցաւազար), **դիւահարցութիւն** (կախարդութեամբ դէւեր կանչելու արարք), **դիւապէտ** (սատանայապէտ) եւ այլն: Այս վերջին բառին պարագային՝ զգո՛ւշ: Չըլլայ որ **«դիւապէտ»**-ը շփոթեք **«դիւանապէտ»**-ին հետ...

«**Դիւանապէտ**» բառը հիմնովին տարբեր կազմութիւն ունի: Անկիւս յառաջ եկած է **«դիւան»** եւ **«պէտ»** բառերու միացումով: Դիւանը ոչ հայկական փոխառեալ բառ մըն է, որ գլխաւորաբար կը նշանակէ պետական գրագրութիւններու յատուկ գրասենեակ կամ արխիւատուն (արաբերէն ու պարսկերէն՝ տիկան): Դիւանապէտը այդ գրասենեակի գլխաւոր պաշտօնեան է: Մեր առաջնորդարաններն ու պատրիարքարանները՝ իբրեւ ազգապետական պաշտօնական հաստատութիւններ, ունին իրենց դիւանապետները: Յաւանաբար այս նոյն արմատէն կու գան **«դիւանազետ»** եւ **«դիւանագիտութիւն»** բառերն ալ, որոնք առատօրէն կը գործածուին քաղաքական լրատուութիւններու մէջ: Թերթի մը Ա. Էջին վրայ կը կարդանք. **«Ռուսաստան արտաքսեց երեք ամերիկացի դիւանագետներ՝ զանոնք լրտեսութեամբ ամբաստանելէ ետք»:** Կամ՝ **«Արտաքին գործոց նախարար ի գործ դրաւ իր ամբողջ դիւանագիտութիւնը՝ այսրոցիկ կացուցելու մեղմացնելու համար»:**



Դեռ **«դիւան»**-ը ունի ուրիշ նշանակութիւններ ալ.

ա) Պատմական երկասիրութիւններու ժողովածու: Շատ նշանաւոր է թիֆլիսեցի ազգագրագետ ու խմբագիր Գիւտ քնյ. Աղանեսանցի **«Դիւան հայոց պատմութեան»** շարքը, որ հրատարակուեցաւ 1893-1917, տասներեք ծաւալուն հատորներով:

բ) Վարչական մարմինի մը կամ ժողովի մը նախագահութիւնը՝ ատենապետ ու ատենադպիր: Կ'ըսենք՝ **«Դպրոցի հոգաբարձութիւնը կազմեց իր նոր դիւանը: Ատենապետ ընտրուեցաւ պր. այսինչեան...»:**

Տանք համանման ուրիշ օրինակ մը եսա՞ ԴԵՐ:

Արմատ բառ մըն է այս ալ, որ առաջին հերթին կը նշանակէ «դերակաւտարութիւն»:

Եթէ այս փոքրիկ բառին ուղղագրութիւնը իւրացուցիք, այնուհետեւ անվարան ճիշդ պիտի գրեք բոլոր այն բառերը, որոնք կ'առնչուին բեմական արուեստին կամ թատրոնի աշխարհին. **դերասան, դերակատար, դերաբաշխում, դերուսոյց, դերընկեր:**

Պէտք է անդրադառնանք նաեւ, որ «դեր»-ը կարգ մը բառերու սկիզբը դրուելով՝ կու տայ «փոխարէն»-ի կամ «փոխանակ»-ի իմաստ: Օրինակ՝ **դերանուն, դերբայ, դերտնօրէն, դերհիւպատոս:** Եթէ հայկական նախակրթարան մը աւարտեր էք, ապա վստահ կրնամ ըլլալ, որ գիտեք հայերէնի անձնական դերանունները (ես, գիւ, իմ, ինծի, ինձմէ, ինձմով...): Սակայն գիտե՛ք արդեօք «դերբայ»-ն ալ:

Պէտք է անդրադառնանք նաեւ, որ «դեր»-ը կարգ մը բառերու սկիզբը դրուելով՝ կու տայ «փոխարէն»-ի կամ «փոխանակ»-ի իմաստ: Օրինակ՝ **դերանուն, դերբայ, դերտնօրէն, դերհիւպատոս:** Եթէ հայկական նախակրթարան մը աւարտեր էք, ապա վստահ կրնամ ըլլալ, որ գիտեք հայերէնի անձնական դերանունները (ես, գիւ, իմ, ինծի, ինձմէ, ինձմով...): Սակայն գիտե՛ք արդեօք «դերբայ»-ն ալ:

Պէտք է անդրադառնանք նաեւ, որ «դեր»-ը կարգ մը բառերու սկիզբը դրուելով՝ կու տայ «փոխարէն»-ի կամ «փոխանակ»-ի իմաստ: Օրինակ՝ **դերանուն, դերբայ, դերտնօրէն, դերհիւպատոս:** Եթէ հայկական նախակրթարան մը աւարտեր էք, ապա վստահ կրնամ ըլլալ, որ գիտեք հայերէնի անձնական դերանունները (ես, գիւ, իմ, ինծի, ինձմէ, ինձմով...): Սակայն գիտե՛ք արդեօք «դերբայ»-ն ալ:

Պէտք է անդրադառնանք նաեւ, որ «դեր»-ը կարգ մը բառերու սկիզբը դրուելով՝ կու տայ «փոխարէն»-ի կամ «փոխանակ»-ի իմաստ: Օրինակ՝ **դերանուն, դերբայ, դերտնօրէն, դերհիւպատոս:** Եթէ հայկական նախակրթարան մը աւարտեր էք, ապա վստահ կրնամ ըլլալ, որ գիտեք հայերէնի անձնական դերանունները (ես, գիւ, իմ, ինծի, ինձմէ, ինձմով...): Սակայն գիտե՛ք արդեօք «դերբայ»-ն ալ:

Պէտք է անդրադառնանք նաեւ, որ «դեր»-ը կարգ մը բառերու սկիզբը դրուելով՝ կու տայ «փոխարէն»-ի կամ «փոխանակ»-ի իմաստ: Օրինակ՝ **դերանուն, դերբայ, դերտնօրէն, դերհիւպատոս:** Եթէ հայկական նախակրթարան մը աւարտեր էք, ապա վստահ կրնամ ըլլալ, որ գիտեք հայերէնի անձնական դերանունները (ես, գիւ, իմ, ինծի, ինձմէ, ինձմով...): Սակայն գիտե՛ք արդեօք «դերբայ»-ն ալ:

Պէտք է անդրադառնանք նաեւ, որ «դեր»-ը կարգ մը բառերու սկիզբը դրուելով՝ կու տայ «փոխարէն»-ի կամ «փոխանակ»-ի իմաստ: Օրինակ՝ **դերանուն, դերբայ, դերտնօրէն, դերհիւպատոս:** Եթէ հայկական նախակրթարան մը աւարտեր էք, ապա վստահ կրնամ ըլլալ, որ գիտեք հայերէնի անձնական դերանունները (ես, գիւ, իմ, ինծի, ինձմէ, ինձմով...): Սակայն գիտե՛ք արդեօք «դերբայ»-ն ալ:

Պէտք է անդրադառնանք նաեւ, որ «դեր»-ը կարգ մը բառերու սկիզբը դրուելով՝ կու տայ «փոխարէն»-ի կամ «փոխանակ»-ի իմաստ: Օրինակ՝ **դերանուն, դերբայ, դերտնօրէն, դերհիւպատոս:** Եթէ հայկական նախակրթարան մը աւարտեր էք, ապա վստահ կրնամ ըլլալ, որ գիտեք հայերէնի անձնական դերանունները (ես, գիւ, իմ, ինծի, ինձմէ, ինձմով...): Սակայն գիտե՛ք արդեօք «դերբայ»-ն ալ:

Պէտք է անդրադառնանք նաեւ, որ «դեր»-ը կարգ մը բառերու սկիզբը դրուելով՝ կու տայ «փոխարէն»-ի կամ «փոխանակ»-ի իմաստ: Օրինակ՝ **դերանուն, դերբայ, դերտնօրէն, դերհիւպատոս:** Եթէ հայկական նախակրթարան մը աւարտեր էք, ապա վստահ կրնամ ըլլալ, որ գիտեք հայերէնի անձնական դերանունները (ես, գիւ, իմ, ինծի, ինձմէ, ինձմով...): Սակայն գիտե՛ք արդեօք «դերբայ»-ն ալ:

Պէտք է անդրադառնանք նաեւ, որ «դեր»-ը կարգ մը բառերու սկիզբը դրուելով՝ կու տայ «փոխարէն»-ի կամ «փոխանակ»-ի իմաստ: Օրինակ՝ **դերանուն, դերբայ, դերտնօրէն, դերհիւպատոս:** Եթէ հայկական նախակրթարան մը աւարտեր էք, ապա վստահ կրնամ ըլլալ, որ գիտեք հայերէնի անձնական դերանունները (ես, գիւ, իմ, ինծի, ինձմէ, ինձմով...): Սակայն գիտե՛ք արդեօք «դերբայ»-ն ալ:

Պէտք է անդրադառնանք նաեւ, որ «դեր»-ը կարգ մը բառերու սկիզբը դրուելով՝ կու տայ «փոխարէն»-ի կամ «փոխանակ»-ի իմաստ: Օրինակ՝ **դերանուն, դերբայ, դերտնօրէն, դերհիւպատոս:** Եթէ հայկական նախակրթարան մը աւարտեր էք, ապա վստահ կրնամ ըլլալ, որ գիտեք հայերէնի անձնական դերանունները (ես, գիւ, իմ, ինծի, ինձմէ, ինձմով...): Սակայն գիտե՛ք արդեօք «դերբայ»-ն ալ:

Պէտք է անդրադառնանք նաեւ, որ «դեր»-ը կարգ մը բառերու սկիզբը դրուելով՝ կու տայ «փոխարէն»-ի կամ «փոխանակ»-ի իմաստ: Օրինակ՝ **դերանուն, դերբայ, դերտնօրէն, դերհիւպատոս:** Եթէ հայկական նախակրթարան մը աւարտեր էք, ապա վստահ կրնամ ըլլալ, որ գիտեք հայերէնի անձնական դերանուններ


ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ. «ՔԱՂԱՔԱԿԱՆ...»

Շարունակուած 3-րդ էջէն

4) Բարեկարգումի կարօտ մարգերու եւ առնուելիք քայլերու սոսկ յիշատակումէն անդին, անհրաժեշտ է, որ յստակ ժամանակացոյց մը ճշդութիւն՝ բնականաբար կատարուելիք բարեկարգումներու առաջնահերթութիւնը եւ տարողութիւնը նկատի ունենալով:

5) Կառավարութեան կողմէ կատարուելիք բոլոր բարեկարգումները յստակ մէկ նպատակ եւ ուղղութիւն պէտք է ունենան. ժողովուրդը հեռու պահել տնտեսական յաւելեալ տուրքերէ, ինչպէս նաեւ մշակել տնտեսական բարեկարգումի նոր ծրագիր մը՝ հանգրուանային կերպով իրագործելի: Կատարուելիք այս աշխատանքներուն գծով կառավարութիւնը միշտ պէտք է համարատու մնայ ժողովուրդին:

Նման գործնական քայլերու դիմելով, Մեր կարծիքով, երկիրը բարեկարգումի ու զարգացումի դրական ընթացքի մէջ կը մտնէ»:



ԱՖՀԻԼ AFHIL

YOGA

Մարալ Օհաննեսեանի հետ

Հինգշաբթի օրերը, կէսօրուան ժամը 12:00-էն 1:30, Արքայեան համալիրի «ԱՖՀԻԼ»-ի կեդրոնէն ներս, 3-րդ յարկ:

Մանրամասնութեանց համար հեռաձայնել 04 712342 թիւին:

www.afhil.com

Ի՞նչ կ'ըսեն ՍՍՏՂԵՐԸ

Նոյ (21 մարտէն 20 ապրիլ)
Մինչեւ ամսուան աւարտը Նոր տեղեկութիւններ պիտի ստանաք ձեր գործին մասին: Ձանձրոյթ եւ տեղբայլէ պիտի տառապիք, յետոյ անակնկալօրէն պիտի ստանաք ձեր ուզածը:

Յուլ (21 ապրիլէն 21 մայիս)
Հաճելի ժամանակ պիտի անցընէք ձեր ընկերներուն եւ ընտանիքի անդամներուն հետ: Ձեզի տրուած խոստումներէն մէկը պիտի կատարուի: Մի՛ վիճաբանիք մէկու մը հետ:

Երկուորեակ (22 մայիսէն 21 յունիս)
Ծրագիր մը իրականացնելու բոլոր տուեալները ունիք: Ճամբորդութիւն մը պիտի կատարէք: Առողջական խնդիրներ պիտի ունենաք: Մէկու մը տուած կարծիքը պիտի գնահատէք:

Խեցեղեկ (22 յունիսէն 23 յուլիս)
Նախընտրեցէք լուրջիւն ու հանդարտութիւնը: Մանրամասնութիւններու մէջ մի՛ մտնէք: Տարբեր տեսակի մարդոց հետ շաղուեցէք, միևնաջ մի՛ մնաք:

Առիւծ (24 յուլիսէն 23 օգոստոս)
Ձեռք պիտի չխնայէք հասնելու ձեր նպատակին: Պիտի հանդիպիք Նոր մարդոց, որոնք օգտակար պիտի դառնան ձեզի: Պիտի նեղանաք Նորութիւններէն եւ ստեղծուած Նոր պայմաններէն:

Կոյս (24 օգոստոսէն 23 սեպտեմբեր)
Մի՛ տաք ձեր կարծիքը ինչ ալ պատահի: Յարմարեցէք Նորութիւններուն: Գրաւի մի՛ դնէք ձեր ուժը: Պիտի չկրնաք հասկընալ ձեր մէկ հարազատին կամ զանկէն վերաբերմունքը: Ընտանեկան հարց մը պիտի ունենաք:

Կշիռը (24 սեպտեմբերէն 23 հոկտեմբեր)
Ցեռածգեցեք ձեր որոշումները: Լոյսերու տակ պիտի մնաք եւ պիտի ամրապնդուի ձեր ժողովրդականութիւնը: Սիրային հարցեր պիտի ունենաք: Ձեր ընկերային հաւաքները պիտի բազմանան:

Կարիճ (24 հոկտեմբերէն 23 նոյեմբեր)
Տարբեր մարգերու մէջ փոփոխութիւններ պիտի կատարուին: Յաջողութիւն մը պիտի արձանագրէք: Ձեր գործունեութիւնները պիտի շատնան այս օրերուն: Չգուշ եղէք, յանկարծ չպատահին այնպիսի երեւոյթներ, որոնց ընթացքին կորսնցնէք ձեր հանգիստը:

Աղեղնաւոր (24 նոյեմբերէն 21 դեկտեմբեր)
Յառաջիկային պիտի ճշդէք ձեր դիրքը: Նիւթական պայմանագիր մը պիտի ստորագրէք: Հանդարտ մնացէք եւ վերապահ եղէք: Որոշ հարցեր ձեր ընթացքը կրնան կասեցնել, զգուշ եղէք:

Այծեղիք (22 դեկտեմբերէն 20 յունուար)
Նիւթական դժուարութիւններ պիտի ունենաք: Առիթ պիտի ունենաք ընդարձակելու ձեր գործունեութիւնները: Մեծ աշխուժութիւն պիտի գգաք: Փափաք պիտի յայտնէք ճամբորդելու եւ խրախմբւելու մասնակցելու:

Ծովանուշ (21 յունուարէն 19 փետրուար)
Ձեզի տրուած դիտողութիւնները պիտի լսէք սրտբաց կերպով: Լռութեամբ ու վերապահութեամբ կատարեցէք ձեր աշխատանքները, առանց ձեր անձնական կեանքին մասին բացայտումներ կատարելու:

Ձուկ (20 փետրուարէն 20 մարտ)
Ձեր ընկերները դրական դեր պիտի ունենան ձեր կեանքին մէջ: Արկածախնդրութեան մի՛ դիմէք: Արկածներու հետեւանքով տագնապ պիտի գգաք: Դուք լաւ ճամբու մէջ կը քալէք: Բախտաւոր օրեր պիտի ունենաք:

ԺԱՄԱՆՅ

ԽԱՉԲԱՌ

1 2 3 4 5 6 7 8 9 10 11

1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										
11										

- ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ**
- Մեծ գրաստ - Արական օտար անուն:
 - Լ. Օ. Խաչի մասնաճիւղերէն - Թատերական հանգրուան:
 - Չայնակից տառեր - Կարծր քարատեսակ:
 - Ինքնաբոյս - Գեղատեսիլ տերեւներով բոյս:
 - Իւրացուցի - Նիճերիոյ քաղաքներէն:
 - Բրտոն - Անձնական դերանուն:
 - Արական անուն - Մայրիկ:
 - Ածականակերտ մասնիկ - Իգական օտար անուն - Չայնակիչ:
 - Սիստեմ - Գրաբար՝ ո՛ր:
 - Տեղեկանալ - Իրանահայ մամուլէն:
 - Նկարչական կարմիր ներկ - Խակ:

- ՈՂՂԱՅԱՅԵԱՅ**
- Խաչադոշ - Լիբանանի լեռներէն (հակ.):
 - Պախլե - Աղամ՝ օտարացած:
 - Իրերայաջորդ գիրեր - Այբուբենէն - Խաղողի եփած քաղցու:
 - Կայսերական հրովարտակ - Արաբական ոստան:
 - Վշտանալ - Կարեւոր:
 - Թոնիրին ակը փակելու խցան:
 - Արցախի հնավայրերէն (հակ.) - Նիւթ:
 - Երեկոյ - Իշխանական առօր -
 - Անատուի դիակ (հակ.) - Բոսոր - Չայնակիչ:
 - Յարաբերական դերանուն - Իգական անուն:
 - Պտղատու ծառատեսակ - Մէկը:

Պատրաստեց՝ Տ. Մ. ԱՂԱԶԱՐԵԱՆ

ՍՈՒՏՈՔՈՒ

1	3				6
	5		4		
			9	3	2
4			2		3
6		5			1
5			7		8
8	4			2	
			6	8	1
	9	2	3		

Հորիզոնական եւ ուղղահայեաց 9 շարքերով եւ սիւնակներով (9x9) կազմուած գծացանցը բաղկացած է իւրաքանչիւր 9 քառակուսի հաշուող 9 բաժիններէ (3x3): Բացառումի սկզբունքին կիրառումով իւրաքանչիւր քառակուսիի մէջ թուանշան մը գետեղել՝ այնպէս մը, որ հորիզոնական իւրաքանչիւր շարք, ուղղահայեաց իւրաքանչիւր սիւնակ եւ 9 քառակուսիից իւրաքանչիւր բաժին ունենայ 1էն 9 թուանշանները՝ իւրաքանչիւր թուանշան միայն մէկ անգամ գործածուելու պայմանով: Այլ խօսքով՝ ո՛չ մէկ պարագայի արտօնուած է թուանշան մը կրկնել միեւնոյն շարքին, սիւնակին եւ բաժինին մէջ: Սկսելու համար՝ կարգ մը թուանշաններ իրենց ճշգրիտ քառակուսիներուն մէջ գետեղուած են:

ՆԱՆՈՐԴ ԺԱՄԱՆՅԻ ԽԱՂԵՐՈՒՆ ԼՈՒՑՈՒՄՆԵՐԸ

ԽԱՉԲԱՌ

1 2 3 4 5 6 7 8 9 10 11

1	Թ	Ո	Ի	Լ	Ա	Ս	Ս	Ր	Ի	Գ
2	Թ	Ո	Ի	Լ	Ա	Ս	Ս	Ր	Ի	Գ
3	Թ	Ո	Ի	Լ	Ա	Ս	Ս	Ր	Ի	Գ
4	Թ	Ո	Ի	Լ	Ա	Ս	Ս	Ր	Ի	Գ
5	Թ	Ո	Ի	Լ	Ա	Ս	Ս	Ր	Ի	Գ
6	Թ	Ո	Ի	Լ	Ա	Ս	Ս	Ր	Ի	Գ
7	Թ	Ո	Ի	Լ	Ա	Ս	Ս	Ր	Ի	Գ
8	Թ	Ո	Ի	Լ	Ա	Ս	Ս	Ր	Ի	Գ
9	Թ	Ո	Ի	Լ	Ա	Ս	Ս	Ր	Ի	Գ
10	Թ	Ո	Ի	Լ	Ա	Ս	Ս	Ր	Ի	Գ
11	Թ	Ո	Ի	Լ	Ա	Ս	Ս	Ր	Ի	Գ

ՍՈՒՏՈՐՈՒ

3	7	5	9	8	1	2	6	4
8	9	1	4	2	6	5	7	3
4	2	6	7	5	3	1	9	8
5	4	9	1	3	7	6	8	2
7	3	2	6	9	8	4	1	5
6	1	8	2	4	5	9	3	7
9	6	4	3	7	2	8	5	1
2	5	3	8	1	9	7	4	6
1	8	7	5	6	4	3	2	9

50 ՏԱՐԻ ԱՌԱՋ

1969 - 2019

21 ՀՈԿՏԵՄԲԵՐ

ԵՐԳ ՈՒ ՌԿՍԱՆՆԱՅ ԲԵՃ

Հրճուանքով կը նայիմ անոր սեւ, գեղեցիկ աչքերուն: Եօթնամեայ այս աղջնակին երակներուն մէջ արմենական արիւնը կ'եռար կարծես: Ու ասիկա՝ հակառակ անոր որ մայրը օտարուհի մըն է, հայրն է միայն հայ: Ամեն անգամ զիս տեսնելուն, կը պատրաստուի իր սորված հայերէն բառերը միացնել իրար ու յայտնել իր միտքը՝ Մետրոպի լեզուով: Գիտէ, որ ուրախութիւն պիտի պատճառէ ինծի այդպէս: Այդ լեզուով խօսած են մայրն ու հայրը, եւ ան իր խեցեցիկ հայերէնով կը քանալ ներգրաւել հոգիս:

Այս աստղերուն տակ, երբ հայ ծնողներու փոքրիկները յաճախ մոռցած են իրենց մայրենի լեզուն՝ տեղականով կը յարաբերին իրարու հետ (հետեւանք մեծերու անհոգութեան), անելի քան միախառնութիւն մըն է ինծի համար լսել օտար մօր մը փոքրիկին հայերէն խօսիլը:

Երբեք տարիէ ի վեր հայկական դպրոց մը կը յաճախէ ան՝ սկսած մանկապարտեզէն:

Այդ երեք տարիները ունեցան ճակատագրական ազդեցութիւն փոքրիկին հալածութեան մէջ:

Հիմա հայ հասակակիցներ են իր ընկեր-ընկերուհիները, իրեն տրուած կերակուրներուն մէջ կան հայկական եւ արեւելեան կերակուրներ ալ, որոնց վարժուած, արձակուրդի եւ տօնական օրերուն կը փնտռէ զանոնք:

Մանկական իր շրթներուն վրայ կան քանի մը հայկական երգերու պատառիկներ:

Ա՛հ, եթէ հայուհի մը ըլլար մայրը այս փոքրիկին՝ կը մտածեմ,- ու սիրէր մեր լեզուն այնպէս, ինչպէս տիպար ամեն հայուհի, հիմա տիպակ պիտի կրակէր ան, որ յափշտակուած՝ կը լսէ իրեն պատմած մանկական սիրուն պատմութեանցներ ու կ'ուզէ որ Նորեր անլցնեն անոնց վրայ:

Հաւասարակշռուած իր բառերուն շարանը երբ կը քակէ, ուրախութիւնս կը դառնայ անսահման:

Բռնի ոչ մէկ յորդոր իրեն՝ խօսելու համար հայերէն, որուն հանդէպ առանձին սեր մը կը զգայ իր մատաղ հոգին:

Ամեն անգամ, երբ կը մտնէ սենեակէս, կը խնդրէ իր տարիքին համապատասխան գիրք մը, զոր շօշափելով ու թերթելով կ'աշխատի թափանցել անոր բովանդակութեան:

Կրկնել չի տար խնդրանքս, երբ առաջարկեմ քանի մը տող կարդալ իրեն տրուած դասագիրքէ մը:

Իր այբբենարանին զրեթէ բոլոր կտորները գոց գիտէ. առանձին հաճոյք մը կը զգայ շարունակ կարդալով զանոնք:

Դպրոցին մէջ անցած դարձած ամեն բանի հետաքրքիր, գիտէ Նոյնիսկ արտասանութեան կտորները իր ընկեր-ընկերուհիներուն: Կը կրկնէ զանոնք ու կ'աշխատի առաջնութիւնը շահիլ իր կարգին:

Նման յաջողութիւն մը արձանագրեց անցեալ տարի ու պատուոյ տախտակին վրայ գրուեցաւ ուրիշներու հերթին իր անունն ալ:

Ի՛նչ պիտի ըլլայ ան, եթէ զինք հայկական դպրոց մը չուղարկէին,- կը մտածեմ: Իր փոքրիկ իմացականութիւնը պիտի կեդրոնանար տարբեր լեզուի մը եւ տարբեր գրաւութեանց վրայ:

Հիմա ան սորված է խօսիլ մեր մայրենիքը, գիտէ նաեւ սպաներէն ու իր տարիքին համապատասխան գիտելիքներ, աւանդուած իրեն վարժարանի ծրագիրով: Հայ դպրոցին բարիքներն են ասոնք ու հաւանօրէն նաեւ գուրգուրոտ վերաբերումը դաստիարակուիկի մը, որ առաջին իսկ օրէն գիտէր, թէ օտար մօր մը հայ փոքրիկն է, որ կը գրաւէ ուռնակը հայ վարժարանին, սորվելու համար հայերէն լեզու:

Իմ փոքրիկ բարեկամուհիս, դարձած է սփոփանք մը ինծի համար: Մտայ ժամերէ տեք, ամեն անգամ որ ան կը թակէ դռնակս ու բարի լոյս կամ բարի երեկոյ՝ կ'ըսէ, ինծի փարելով, մոռցած ամեն յոգնութիւն ու զարտուող մտածում, կը զրկեմ սիրատուն այս փոքրիկը հրճուանքով:

Հայ դպրոց, ան քու տուրքդ է, ընծայուած իր ծնողին ու ցեղային անճառելի գեղեցկութիւններուն նախանձախնդիր անստոյգ ապագայի մը առջեւ կանգնած բոլոր սրտցաւ հայերուն: Ես հրճուանքով կը նայիմ փոքրիկներու այն խմբակներուն, որոնք անջատուած մեր տոհմիկ արժէքները ուրացող ծնողներու փոքրիկներու բանակէն, փրկութիւն կը փնտռեն հայ վարժարանի մը շուրջին ներքեւ:

Թող մինչեւ երջանիկ հայրենադարձ, արեւը չմարի անոր կտորներէն ու ան շարունակէ Ս. Մետրոպի տառերուն արեւաշող լոյսն ու քաղցրութիւնը ծորել արմենական արիւնով հպարտ հայ մանուկներու սրտին մէջ:

Երգ ու ողբանանջ՝ քեզ, հայ՝ դպրոց:

ՎԱՐՈՒՆ ԳԵՈՐԳԵԱՆ

Պոնտոս Այրես
3 հոկտեմբեր 1969

ՆՅՍՈՐ՝ «ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»-ԷՆ

Radio Voice of Van - Վանայ Զայն FM: 94.7 ԵՒ 95 MHz

7.00 Զայլերգներ / Բարի լոյս

7.15 Սփիւռքեան մեղմ երգեր

7.30 Երկու բարեւ

8.30 Լուրեր

9.00 Երկու բարեւ

9.30 Բարեւ հարցազրոյց (հիւր՝ Արշալոյս Պալեան եւ Վահրամ Էմմիան)

10.00 Լոր երգեր

10.30 Հայկական աշխարհի լուրեր

10.45 Շաբթուան առակը

11.00 Ձեռք երկարեց

12.30 Արդի մշակումով ժողովրդային երգեր

1.00 Ազգային - հայրենասիրական երգեր

1.30 Լուրեր

2.00 Յիշատակելիները

2.05 Յեղափոխական երգեր

3.00 Ըջլ եմ պիոյմու (Նիւթ՝ գեղարւեստական)

4.00 Ժընտի

4.30 Օ.Թի.Վի.-ի հայերէն լուրերու ուղղակի սփռում

4.50 Խանդավառ երգեր

5.00 «Վանայ Զայն»-ը երեկոյեան

5.30 Հանդիպում

6.30 Լուրեր

6.50 Լոր երգեր

7.00 Դեպի ասպարեզ (Նիւթ՝ դեղագործութիւն)

7.30 Լիբանանահայ երգիչներու կատարումներ

8.00 Օրուան երգիչ (Արամ)

8.30 Եսդրատային երգեր

9.00 Աշուղական երգեր

9.30 Հայկական աշխարհի լուրեր (կրկ.)

9.45 Սփիւռքեան երգեր

10.00 Ազնաւորի հետ

10.30 Դեղինակային երգեր

Golden oldies

12.00 Յեղափոխական երգեր

1.00 Հայերէն այլազան երգեր

3.00 Կրկնութիւններ

5.00 Հայերէն այլազան երգեր

6.00 Հայկական երաժշտութիւն

«Վանայ Զայն»-էն սփռուող բոլոր յայտագիրները կարելի է գտնել եւ ունկնդրել ռատիոկայանի կայքէջին արխիւներ բաժնին մէջ (voiceofvan.net):

ՃԱՏՐԱԿ. «ԿՐԱՆՏ ՍՈՒԻՍ»

ԱՐՈՆԵԱՆ ՀԱԻԱՍԱՐՈՒԹԻՒՆ ՄԸ ԱՐՁԱՆԱԳՐԵՑ ՆԱՔԱՄՈՒՐԱՅԻ ՀԵՏ



ՖԻՏԵ-ի «Կրանտ Սուիս»-ի ճատրակի միջազգային մրցաշարը այսօր՝ երկուշաբթի, 21 հոկտեմբերին, կը հասնի իր աւարտին, երբ կը կատարուին 11-րդ եւ վերջին հանգրուանի ճակատումները:

Երեկ հայկական ճատրակի յառաջատար Լեւոն Արոն-եան, որ կը մրցեր սեւ քարերով, հաւասարութիւն մը ար-ծանազրեց ամերիկացի Յիքարու Նաքամուրայի հետ: 31-րդ շարժումին կողմերը համաձայնեցան հաւասարու-թեան:

Անոնք այժմ 10-ական կէտով յառաջատարներն են: Տիտղոսակիրը կը ստանայ աշխարհի ախոյեանի յա-ւակնորդներու մրցաշարքին մասնակցելու իրաւունք:

ԼՈՂԱՐՇԱՐ

ԿԱՍԻԱ ԳԸԼՈՒՔԵԱՆ ՏԻՐԱՅԱԻ 3 ՄԵՏԱԼԻ՝ ԿԻՊՐՈՍԻ ՄԷՋ



Լիբանանահայ արհեստավարժ լողորդ Կասիա Գըլուբ-եան, որ իր մասնակցութիւնը քերաւ Կիպրոսի մէջ տեղի ունեցած «Մասթըրզ»-ի լողարշաւի միջազգային մրցա-շարքին, Լիբանանի համար ապահովեց երեք մետալ:

Ան տիրացաւ մէկ արծաթ եւ 2 պրոնզ մետալի:

Հակառակ Լիբանանի մէջ տեղի ունեցող ցոյցերուն, ան յաջողեցաւ Լիբանանի միջազգային օդակայանէն Կիպ-րոս մեկնիլ եւ իրն արձանագրել բաւական տպաւորիչ ար-դիւնքներ՝ իր շարունակական փորձերուն շնորհիւ:

ՀԱՅԿԱԿԱՆ ՖՈՒԹՊՈԼ

ՓԻՆԻԿ ԵՐԵՒԱՆ ԿՐԵՑ ԻՐ 6-ՐԴ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ. ԵՐԵՒԱՆ՝ ՅԱՐԴ ԱՌԱՆՅ ԿԷՏԻ



Փինիկ - Ուրարտու երեկուան մրցումէն

Նախորդ շաբաթավերջին տեղի ունեցան Հայաստանի ֆութպոլի բարձրագոյն դասակարգի ախոյեանութեան 11-րդ հանգրուանի մրցումները:

Թէեւ Արարատ Երեւան 2-1 արդիւնքով պարտութիւն մը կրեց Շիրակ Գիւմրիէն, սակայն մնաց պարագլուխի դիրքին վրայ՝ իր ունեցած **կոլէկտընջին** շնորհիւ գերա-զանցելով Նոյնիքն Շիրակը: Անոնք ունին 22-ական կէտ:

Շաբ.ը՝ էջ 10

«ՓՐԵՄԻԵՐ ԼԻԿ»

ԼԻՎԵՐՓՈՒԼ ՄՆԱՅ ԱՆՊԱՐՏԵԼԻ՝ 1-1 ԱՐԴԻՒՆՔՈՎ ՀԱԻԱՍԱՐՈՒԹԻՒՆ ՄԸ ԱՐՁԱՆԱԳՐԵԼԷ ԵՏՔ «ՕԼՏ ԹՐԵՖՈՐՏ»-Ի ՄԷՋ

Անգլիոյ ֆութպոլի ախոյեանութեան՝ «Փրեմիեր լիկ»-ի 9-րդ հանգրուանի զագաթի ճակատումին, երեկ Մանչեսթըր Եունայթ-ըդ իր դաշտին՝ «Օլտ Թրեֆորտ»-ի մէջ հիւրըն-կալեց Լիվըրպոլը:

Շուրջ 74 հազար հանդի-սատներու ներկայու-թեան տեղի ունեցած այս ճակատումը վերջ գտաւ 1-1 հաւասարութեամբ:

Դաշտին տերը 36-րդ վայրկեանին բացաւ մրցու-մին հաշիւը՝ շնորհիւ Մար-քուս Ռեշֆորտի:

Լիվըրպոլ, որ ցարդ իր կատարած 8 մրցումներուն արձանագրած էր ութ յաղ-թանակ, մնաց անպարտելի միակ խումբը, երբ հաւա-սարութիւն մը արձանա-գրեց Եունայթըդի հետ՝ շնորհիւ Ատամ Լալանայի նշանակած կոլին (85-րդ):

Մինչ Լիվըրպոլ ունե-ցաւ 25 կէտ, անդին Ման-



Մանչեսթըր Եունայթըտ - Լիվըրպոլ մրցումէն

չեսթըր 10 կէտով կը գրաւէ դասաւորման 13-րդ ոչ նա-խանձելի դիրքը:

Մանչեսթըր Սիթի, որ կը գրաւէ 2-րդ դիրքը, 2-0 ար-դիւնքով վերադարձաւ Քրիսթալ Փալասի դաշտէն: Անիկա այժմ վեց կէտով մնայն ետ է Լիվըրպոլէն: Սիթի իր 2 կոլերը նշանա-

կեց Ա. կիսախաղին: Յաղթանակ արձանա-գրեց Նաեւ Չելսի՝ 1-0 ար-դիւնքով պարտութեան մատնելով իր հիւրը՝ Նիւ-քասթլը:

Այս հանգրուանը կ'աւար-տի այսօր, երբ ժամը 22:00-ին Արսենալ հիւրը կ'ը-լայ Շեֆիլտ Եունայթըտին:

«ԶԱՆԴԻՕ»

ԵՈՒՎԵՆԹՈՒՄ ԵՒ ԻՆԹԵՐ ՄԻԼԱՆ՝ ՅԱՂԹԱԿԱՆ

Իտալիոյ ֆութպոլի ախոյեանութեան՝ «Քալչիօ»-ի 8-րդ հանգրուա-նի մրցումներուն, պարա-գլուխի դիրքը գրաւող Եու-վենթում եւ անոր անմիջա-կան մրցակիցը՝ Ինթեր Մի-լան, յաղթանակներ արձա-նագրեցին:

Ասիկա պատաճառ դար-ծաւ, որ անոնց միջեւ գտնուող կէտի մը տարբե-րութիւնը մնայ անփոփոխ:

Քրիսթիանօ Ռոնալտոյի (19-րդ) եւ Միրալեմ Ժամանիչի (54-րդ) նշանակած կոլերուն շնորհիւ, Եուվէ 2-1 արդիւն-քով յաղթեց Պոլոնիայէն:

Իսկ կոլերով հարուստ մրցում մը ետք, Ինթեր Միլան 4-3 արդիւնքով յաղթանակ



Սասուոլօ - Ինթեր Միլան մրցումէն

մը արձանագրեց Սասուոլոյի դաշտին վրայ: Ինթեր իր երրորդ եւ չորրորդ կոլերը նշանակեց փենալթիով:

«ՊՈՒՆՏԵՍԼԻԿԱ»

8-ՐԴ ՀԱՆԳՐՈՒԱՆԻ ՄՐՅՈՒՄՆԵՐԸ ԵՂԱՆ Ի ՆՊԱՍ ՊՈՐՈՒՄԻԱ ՏՈՐԹՄՈՒՆՏԻՆ

Գերմանիոյ ֆութպոլի ախոյեանութեան՝ «Պոկա-տսլիկա»-ի 8-րդ հանգըր-ւանի մրցումներուն, երկրի գործող ախոյեան Պայերն Միւնխի 2-2 արդիւնքով հա-ւասարութիւն մը արձա-նագրեց Օլգապոլիկի դաշ-տին վրայ (14-րդ):

Օլգապոլիկ հաւասարու-թեան իր կոլը նշանակեց մրցումին կորստած վայր-կեաններուն (90+1):



Տորթմուտի կոլը նշանակած Մարքո Ռէու

ՄԱՆՉԵՍԹԵՐ ԵՈՒՆԱՅԹԵՏԻ ՅԱԶՈՐԴ ՄԵՓԱԿԱՆԱՏԵՐԸ... ՄԷՈՒՏՅԻ՞Ր

Մեւտական Արաբիոյ գահաժառանգ, 34 տարեկան Մոհամետ Պըն Սալման իշ-խանը, որոշած է Կլէյզըններու ընտանիքէն գնել անգլիական Մանչեսթըր Եունայթըտ ակումբը:

Ըստ անգլիական մամուլին, ան առա-ջարկած է 3,48 միլիարդ եւրօ, որ սակայն չէ ընդունուած Կլէյզըն ընտանիքին կողմէ:

2005-էն ի վեր Կլէյզընները Նիւ Եորքի մէջ ծախու հաւանք են ակումբին բաժնե-տոմսերուն 13 տոկոսը՝ փոխան 314 միլիոն եւրոյի:



ՔԼԻՆՍՄԱՆ ԿԸ ՎԵՐԱԴԱՌՆԱՅ ՄԱՐԶԻԶԻ ԻՐ ԱՍՊԱՐԷԶԻՆ

Ֆրանսական «Լ'Էքիփ» մարզական օրաթերթը կը յայտնէ, որ Էիւրկըն Զլինս-ման, որ Նոյեմբեր 2016-էն ի վեր անգործ է, կը վերադառնայ մարզիչի իր ասպարէզին: Շատ հաւանական է, որ ան ստանձնէ Էքզուատորի ֆութպոլի ազգային խումբի մարզիչի պաշտօնը:

Նշուեցաւ, որ ան արդէն իսկ 3 տար-ւան համաձայնագիր մը ստորագրած է:



ՌՈՒՍԱԿԱՆ ՖՈՒԹՊՈԼ

ՀԱՐՈՅԵԱՆ. «ԿՈԼՍ ԿԸ ՆՈՒԻՐԵՄ ԵՐԵՒԱՆԻ 2801-ԱՄԵԱԿԻՆ»



Հայաստանի ֆութպոլի ազգային հաւաքականի եւ Ու-րալի յետապահ Վարազդատ Հարոյեան, Ռուսիոյ ֆութ-պոլի Ա. դասակարգի ախոյեանութեան 13-րդ հանգրուա-նի ծիրին մէջ, կերտեց իր կազմին յաղթանակը, երբ Թամ-պովի դէմ կատարուած մրցումին նշանակեց իր կազմին երկրորդ կոլը՝ 76-րդ վայրկեանին:

Մրցումէն ետք Հարոյեան ըսաւ. «Շատ ուրախ եմ, որ յաղթանակի կոլի հեղինակ դարձայ: Այս կոլը կը նուիրեմ Երեւանի հիմնադրութեան 2801-ամեակին: Իմ ամէն կա-րելիս պիտի ըլնեմ առաւելագոյն ձեւով օգտակար դառնա-լու համար խումբիս, որպէսզի անելի առաջնակարգ դիր-քերու վրայ գտնուիմք»:

Շաբ.ը՝ էջ 10

«ԼԱ ԼԻԿԱ»

ՊԱՐՄԵԼՈՆԱ ՊԱՐԱԳՒՈՒՄԻ ԳԻՐՔԸ ԽԼԵՑ ՌԷԱԼ ՄԱՏՐԻՏԷՆ

Սպանիոյ ֆութպոլի ախոյեանութեան՝ «Լա լիկա»-ի 9-րդ հանգրուանի մրցումներուն, երկրի գործող ախոյեան Պարսելոնա արձանագրեց տարեշրջանի իր 6-րդ յաղթա-նակը, երբ 3-0 արդիւնքով յաղթական վերադարձաւ Էյ-պարի դաշտէն:



Լուիս Սուարեզ (ձախին) եւ Ալթոնան Կրիզման

Արձանագրուած այս յաղթանակին շնորհիւ, Պարսա պարագլուխի դիրքը խլեց ՌԷալ Մատրիտէն, որ տարեշըր-ջանի իր առաջին պարտութիւնը կրեց այս տարեշրջանին Ա. դասակարգ բարձրացած Մայորքայի դաշտին վրայ՝ 1-0 արդիւնքով: Լալկօ ժուկիոր նշանակեց յաղթական կազ-մին եւ մրցումին միակ կոլը՝ 7-րդ վայրկեանին: ՌԷալէն կարմիր քարտ մը ստացաւ Ավարօ Օտրիգոլա (74-րդ):

Պարսելոնայի երեք անպատասխան կոլերը նշանակե-ցին Ալթոնան Կրիզման (13-րդ), Լիոնել Մեսսի (58-րդ) եւ Լուիս Սուարեզ (66-րդ):

Ուրուկուէյցի Սուարեզ, որ քաթալոնական կազմին հետ այսպիսով նշանակեց իր 184-րդ կոլը, ակումբին պատմութեան մէջ այժմ ամենէն շատ կոլ նշանակած չոր-րորդ ֆութպոլիստն է: Առաջին դիրքին վրայ կը գտնուի Մեսսի (605 կոլ):

Այս հանգրուանէն ետք, այժմ Պարսելոնա ունեցաւ 19 կէտ, մինչ երկրորդ դիրքին վրայ գտնուող ՌԷալ Մատրիտ ունի 18 կէտ:

Ալթեթիքօ Մատրիտ - Վալենսիա ճակատումը աւար-տեցաւ 1-1 հաւասարութեամբ:

ՄԱՆ ՓԱՌԼՈՅԻ ՅԱՌԱԶԱՊԱՀԸ 2 ՏԱՐԻՈՎ ԿԱՆԱԿԱՅՈՒԵՑԱԻ

Պր ա գ ի լ ա - կան մարզական մամուլը հաղոր-դեց, որ երկրին անուանի ֆութ-պոլի ակումբնե-րէն Սան Փաու-լոյի յառաջա-պահ Կոնգալօ Զարնէյրօ, երկ-րին ֆութպոլի ֆետերասիոնին կողմէ 2 տա-րիով կախակա-լեցաւ թմրանիւթեր գործածած ըլլալուն համար:

Ֆութպոլիստը պիտի բողոքէ այդ պատիժին դէմ՝ նշե-լով, որ թմրանիւթեր գործածելու ամբաստանութիւնը իրականութեան չի համապատասխաներ:

2018-ին Սան Փաուլօ տեղափոխուած Զարնէյրօ (ու-րուկուէյցի) իր կազմին հետ մասնակցած է 15 մրցումի:



ԹՐԲԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ ԳՐԱԴԵՑ ՌԱՍ ՈՒԼ ԱՅՆԸ, ԱՄԵՐԻԿԵԱՆ ՈՒԺԵՐԸ ՀԵՌԱՅԱՆ ՀԱԼԷՊԻ ՈՒ ՌԱՔՔԱՅԻ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ



Սուրիական պետական ՍԱՆԱ լրատու գործակալությունը հաղորդեց, որ թրքական բանակն ու անոր վարձկանները երեկ գրաված են Սուրիոյ Դասաբեի գիւղական շրջանին մէջ գտնուող Ռաս Ուլ Այն քաղաքը։ «Մայաթին» իր կարգին հաղորդեց, որ Դասաբեի և Ռասաբեի սահմաններում մէջ գտնուող ամերիկեան ուժերը ամբողջովին հեռացած են Նշեալ սահմաններէն։ Ամերիկեան ուժերը 60 մեքենաներով եւ բեռնակառքերով շրջանէն հեռացած են Դասաբեի արեւելեան գիւղական շրջանին մէջ գտնուող Սարին օդակայանէն։ «Մայաթին» արբանեակային պատկերասփիւռի կայանը Նշեց, որ ամերիկեան զինուորական շարասիւն մը մուտք գործած է Դու ճամբար, ուր կը գտնուին ՏԱԴԵԾ-ի անդամներու ընտանիքները, մինչ նոյն պահուն ճամբարին վերեւ թռիչքներ կը կատարէին երկու ուղղութիւններ։ Ամերիկեան ուժերը ճամբարէն անորոշ ուղղութեամբ հեռացուցած են ՏԱԴԵԾ-ի զինեակներու շարք մը կիներ։ Ամերիկեան ուժերը Այն Արապի օդակայանէն հեռանալէ առաջ իրկիզած են թոյնածորարներ եւ փաստաթուղթեր։ Դասաբեի հիւսիսային գիւղական շրջանի խարապ ժիր ռազմակայանին մէջ գտնուող ֆրանսական ուժերը իրենց կարգին հեռացած են շրջանէն։ ՍԱՆԱ հաղորդեց, որ ամերիկեան ուժերը քանդած են Թէլ Պայտար շրջանին մէջ գտնուող Բլէյպ ոչ օրինական ռազմակայանը եւ կը պատրաստուին հեռանալ Դասաբեի գիւղական շրջանին մէջ գտնուող իրենց ռազմակայանէն։ ՍԱՆԱ Նշեց, որ ամերիկեան ուժերը շրջանէն կը հեռանան իրաքի ուղղութեամբ։

«ԹՈՒՐԲԻԱՆ ՊԱՏՐԱՍ Է ՎԵՐԱԿԱՆՈՒ ՍՈՒՐԻՈՅ ՄԵՋ ՁԻՆՈՒՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ»

Կ'ԸՍԵ ԱՔՐ

Թուրքիոյ պաշտպանութեան նախարար Դուլսի Աքար յայտարարած է, որ իր երկիրը պատրաստ է Սուրիոյ հիւսիս-արեւելքին մէջ վերսկսելու «հաղաղութեան աղբիւր» զինուորական գործողութեան։ Այս մասին կը հաղորդէ ռուսական «Կազեթա» կայքը։



Աղբիւրին փոխանցումով՝ նախարարը ընդգծած է, որ թրքական կողմը պիտի վերսկսի զինուորական գործողութիւններուն, եթէ Միացեալ Նահանգներ չկատարեն քրտական ուժերը թուրքական սահմանէն հեռացնելու իրենց խոստումը։ «Մեր գործերը ամբողջովին պատրաստ են ատոր», ըսած է Աքար։ Ան յստակացուցած է, որ հնգօրեայ ժամանակահատուածի մէջ, ինչպէս համաձայնած են Միացեալ Նահանգներն ու Թուրքիան, քրտական ուժերը պետք է դուրս բերին անվտանգութեան գոտիէն։ Թուրք նախարարներու համաձայն, քրտական ստորաբաժանումները պետք է յանձնեն ծանր սպառազինութիւնը, իսկ անոնց դիրքերը պետք է ոչնչացուին։ Յիշեցնենք, որ 17 հոկտեմբերին Միացեալ Նահանգներու փոխնախագահ Մայք Փենսի, արտաքին գործոց նախարար Մայք Փոմպեյոյի եւ Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողանի միջեւ կայացած բանակցութիւններուն հիմամբ համաձայնութիւն գոյացած էր Սուրիոյ մէջ զինադադարի շուրջ։ Ըստ յայտարարութեան, Թուրքիան 120 ժամով կը դադրեցնէ Սուրիոյ մէջ սկսած իր զինուորական գործողութիւնը, որպէսզի քրտական ուժերը հեռացուին Սուրիոյ հետ սահմանին վրայ ստեղծուող անվտանգութեան գոտիէն։

8-ԳՔ ՀԱՆԳՐՈՒՄՆԻ. . .

Շարունակուած 9-րդ էջէն

Պայերնի կոլերը Նշանակեցին Ռոպերթ Լեվանտովսքի (14-րդ) եւ Սերժ Նևապի (49-րդ)։ Շաբթուան գագաթի ճակատումին աւելի քան 81 հազար հանդիսատեսներու ներկայութեան, Պորուսիա Տորթմունտ 1-0 արդիւնքով յաղթեց իր հիւրին՝ Պորուսիա Մեռնընկլատպախին։ Յաղթական կազմին կողմ Նշանակեց Մարքո Ռէս (58-րդ)։ Արձանագրուած այլ հաւասարութիւն մըն ալ՝ Լայպցիգի եւ Վոլֆսպուրկի միջեւ (1-1), դարձեալ եղաւ ի նպաստ Տորթմունտին։ Մեռնընկլատպախի եւ Վոլֆսպուրկի այժմ ունին 16-ական կէտ, մինչ Պայերն, Տորթմունտ եւ Լայպցիգ՝ 15-ական կէտ։

«ՔՐՏԱԿԱՆ ՈՒԺԵՐԸ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ՊԱՐԱԳԱՅԻՆ ԹՈՒՐԲԻԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ ՊԻՏԻ ՅԱՅՏԱՐԱՐԷ ՍՈՒՐԻՈՅ ԳԷՄ»

Կ'ԸՍԵ ԱՔՐ



Եթէ Սուրիոյ կառավարական բանակը կ'ուզէ մուտք գործել Մընպեժ, Այն Արապ, Գամիշլի, որպէսզի պաշտպանէ քրտական ուժերը, ապա Թուրքիան պատերազմ պիտի յայտարարէ, եւ անոնք համարժեք պատասխան պիտի ստանան։ Այս մասին «ՌԻԱ Նովոսթի» լրատու գործակալութեան յայտնած է Թուրքիոյ նախագահի խորհրդական Եասին Աքթայ։

«Միացեալ Նահանգներու զօրքերը, որոնք կ'աջակցեն քրտական ուժերուն, ներկայիս կը լքեն տարածքը, սակայն եթէ սուրիական բանակը պաշտպանէ զանոնք, ապա Թուրքիոյ դիրքորոշումը պիտի չփոխուի, մենք չենք կրնար ատիկա արտօսել», Նշած է Աքթայ։ Անոր համաձայն, եթէ

սուրիական բանակը երաշխաւորէ, որ տարածքին մէջ չկան ահաբեկչական խմբաւորումներ, որոնք կրնան սպառնալիք ներկայացնել Թուրքիոյ անվտանգութեան, Անգարան կրնայ փոխել իր դիրքորոշումը եւ զնահատել իրավիճակի կարգաւորման նպատակով առաջարկուող լուծումները։

ՓԵՍՔՈՎ ՅԱՅՏՆԱԾ Է, ԹԷ ՓՈՒԹԻՆ ԻՆՉՈՎ Կ'ԱՌԱՋՆՈՐԴՈՒԻ ՄԻՋԱՉԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԵՋ

Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին միջազգային քաղաքականութիւն վարած ատեն կ'առաջնորդուի երկրին ներքին շահերով։ «ՌԻԱ Նովոսթի» կը հաղորդէ, որ այս մասին յայտնած է Ռուսիոյ նախագահի բանբեր Տիլիթի Փեսով։ Փեսովը «Մոսկուա։ Քրեմլին։ Փութին» պատկերասփիւռի հաղորդման ծիրին մէջ ըսած է, թէ Ռուսիոյ նախագահը կ'առաջնորդուի նախ եւ առաջ Ռուսիոյ բնակիչներուն շահերով։ «Դուք կը տեսնէք, որ մեծ թիւով որոշակի համաձայնագիրներ կը ստորագրուին, որոշակի փաստաթուղթեր», ըսած է Ռուսիոյ նախագահի բանբերը։ Անցեալ շաբաթ տեղի ունեցած են Փութինի պաշտօնական այցելութիւնները Սեւտական Արաբիա եւ Արաբական Միացեալ Էմիրութիւններ։ Այցելութիւններուն ընթացքին կողմերուն միջեւ ստու-



րագրուած են տարբեր ուղղութիւններով շարք մը համաձայնագիրներ։ Ռուսիան եւ Արաբական Միացեալ Էմիրութիւնները, ընդհանուր առմամբ, 1,4 միլիարդ տոլարի համաձայնագիրներ կնքած են։

ԹՐԱՄՓ ՀՐԱԺԱՐԱԾ Է ԵՕԹՆԵՐՈՒ ԽՄԲԱԿԻ ՎԵՀԱԺՈՂՈՎԸ ՄԱՅԱՄԻ ԻՐ ՀԱՆԳԱՏԱՎԱՅԻՆ ՄԵՋ ԳՈՒՄԱՐԵԼԸ

Միացեալ Նահանգներու նախագահ Տանըլտ Թրամփ խոստովանած է, որ հրաժարած է Եօթներու խմբակի վեհաժողովը Մայամի իր հանգստավայրին՝ «Թրամփ Նեշնըլ Տորըլ Մայամի»-ի մէջ գումարելու գաղափարէն։ Այս մասին կը հաղորդէ ռուսական ԹՃՍՍ լրատու գործակալութիւնը։



«Լրատուամիջոցներուն եւ դեմոկրատականներուն ցուցաբերած ոչ ողջմիտ «թշնամական» վերաբերմունքին պատճառով մենք այլեւ «Թրամփ Նեշնըլ Տորըլ Մայամի»-ն նկատի չենք ունենար իբրեւ վեհաժողովի գումարման վայր։ Մենք սկսած ենք վեհաժողովի գումարման համար այլ տարբերակներ քննարկել։ Դաւանաբար գայն գումարենք Զեմի Տեյվիտի մէջ։

«Ես կը կարծի, իբրեւ վեհաժողովի գումարման վայր «Թրամփ Նեշնըլ Տորըլ Մայամի»-ն առաջարկելով՝ երկրին համար լաւ գործ կ'ընեն։ Ես յայտարարած եմ, որ պատրաստ եմ ատոր դիմաց ոչինչ ստանալու։ Եթէ իրաւական հարթութեան վրայ ատիկա ընդունելի ըլլար, ապա Միացեալ Նահանգները ատոր վրայ ոչ մէկ գումար կը ծախսէր։ Սակայն, ինչպէս միշտ, «թշնամական» լրատուամիջոցները եւ անոնց գործընկեր դեմոկրատականները խենթա-

Սեպտեմբերի սկիզբը Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու տան մէջ դեմոկրատականները հետաքննութեան սկսած են՝ Թրամփի ծառայողական դիրքը օգտագործելով պաշտօնական միջոցառումներու հաշուոյն հարցատանալու փորձերու եւնթադրութիւններու շուրջ։

ՀԱՐՈՅԵԱՆ. «ԿՈԼՍ ԿԸ . . . »

Շարունակուած 9-րդ էջէն

Նշենք, որ այս մրցումէն ետք, Թամպովի գլխաւոր մարզիչ Ալեքսանտր Գրիգորեան յայտարարեց, որ կը ներկայացնէ իր հրաժարականը։ 53 տարեկան ֆութպոլի մասնագէտը խումբին հետ աշխատանքի սկսած էր նախորդ ապրիլին։



ԱԶԳԻՅՈՒՆԻ ՄԵՋ ԲԱՆՈՒՄՆԵՐ. ՁԵՐԲԱԿԱՆՈՒՄԸ Է ԸՆԳԴԻՄՈՒԹԵԱՆ ՂԵԿԱՎԱՐԸ



Ազգայեանի մէջ շաբաթ օր ցուցարարներուն եւ երկրի ապահովական մարմիններուն միջեւ տեղի ունեցած են բախումներ։ Ազգայեանական իշխանութիւնները արգիլած էին երեկ նախատեսուած հաւաքի կայացումը։ Կը հաղորդուի հարիւրաւոր ձերբակալումներու մասին։ Ազգայեանի գլխաւոր ընդդիմադիր Ազգային ճակատ կուսակցութեան ղեկավար Ալի Զերիմլի, Ազգային խորհուրդի անդամներ Վահիտ Մակերրամի եւ Թոֆիկ Եադուլու ձերբակալուածներուն կարգին են։ Երեք ընդդիմադիրները դուրս եկած են Զերիմլիի տունէն, շարժած են քանի մը հարիւր մեթր, որուն ընթացքին անոնց միացած են հարիւրաւոր ցուցարարներ եւ սկսած ինչեղնել հակակառավարական կարգախօսներ, որմէ ետք ազգայեանական ոստիկանութիւնը սկսած է ձերբակալել ցուցարարները։ Ձերբակալուած է նաեւ «Ազատուլ» թերթի աշխատակից Թագեհան Միդալմալին։ Պաքիստանի շարք մը մասերուն եւ երկրի տարբեր շրջաններուն մէջ անջատուած է համացանցը։

«ԵԹԷ ԷՐՏՈՂԱՆ ԵՐԵՔ ՄԻԼԻՈՆ ԳԱՂԹԱԿԱՆ ՈՒՂԱՐԿԷ, ՄԵՆՔ ԱԼ ԵՐԵՔ ՄԻԼԻՈՆ ԹՈՒՐԲ ԵՏ ՊԻՏԻ ՈՒՂԱՐԿԵՆՔ»

ԸՍՍԾ Է ՍՈՆՊՈՈՆ



Երոպական խորհրդարանի անդամ Մարթին Սոնպոն անդրադարձած է Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողանի սպառնալիքներուն։ 9 հոկտեմբերին Սուրիոյ հիւսիս ներխուժելէ ետք Թուրքիան արժանացած էր քննադատութիւններու, իսկ եւրոպական քանի մը երկիրներ ալ դադրեցուցած էին Թուրքիոյ գէնքի վաճառքը, ինչին ի պատասխան Էրտողան սպառնացած էր բանալ երկրի սահմանները գաղթականներու համար, որոնք պիտի ուղղուին դէպի Եւրոպա։ «Եթէ Էրտողան մէկ անգամ եւս մեզի սպառնայ երեք միլիոն սուրիացի գաղթականներով, ես ալ պիտի սպառնամ Զորացալրկէն (Պերլինի շրջաններէն մէկը) երեք միլիոն թուրքերը ետ ուղարկելով։ Սակայն ատիկա հիմա չեմ կրնար բացայայտ ըսել. պիտի արժանանամ Լիւնդի դատաստանի», «Սփութիւն» լրատու գործակալութեան գերմանական ծառայութեան հետ զրոյցի ընթացքին Նշած է Երեսփոխանը։

ՓԻՆԻԿ ԵՐԵԻԱՆ ԿՐԵՅ . . .

Շարունակուած 9-րդ էջէն

7-րդ դիրքին վրայ գտնուող Փինիկ Երեան 2-1 արդիւնքով կրեց տարեշրջանի իր վեցերորդ պարտութիւնը իր հիւրէն՝ Ուրարտուէն։ Ինչ կը վերաբերի վերջին դիրքը գրաւող Երեանի, անկիւ կրեց իր 11-րդ պարտութիւնը Նոայէն՝ 3-1 արդիւնքով։ Անկիւ ցարդ ոչ մէկ կէտ ապահոված է։ Այս հանգրուանը կ'աւարտի այսօր, երբ տեղի կ'ունենայ Գանձասար - Արարատ Արմենիա մրցումը։ Արարատ Արմենիա, որ ունի 19 կէտ, ցարդ կատարած է 8 մրցում։

Ստորեւ՝ դասաւորման պատկերը.

	ՄՐՑ.	ԿԵՏ
1.- Արարատ Երեան	11	22 (18-9)
2.- Շիրակ Գիւմրի	11	22 (16-9)
3.- Արարատ Արմենիա	8	19 (14-6)
4.- Լոռի	10	18 (12-12)
5.- Նոա	11	17 (14-10)
6.- Ալաշկերտ	10	16 (17-11)
7.- Փինիկ	11	13 (19-22)
8.- Ուրարտու	11	12 (11-17)
9.- Գանձասար	10	7 (8-13)
10.- Երեան	11	0 (6-26)